ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ

ՀԱՎԱՏԱՄՔ՝
ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայկ Նազարյան

ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ

ՀԱՎԱՏԱՄՔ՝ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայկ Նազարյան

Երևան, Հայաստան

2025թ. – Երրորդ հրատարակություն

2024թ. – Երկրորդ հրատարակություն

2023թ. – Առաջին հրատարակություն

hosank.net

info@hosank.net

t.me/hosank

©Նազարյան Հայկ, 2025

Այս աշխատությունը նվիրում եմ 44-օրյա դավադիր պատերազմում զոհված հայ քաջերի ու նահատակված հերոսների անմահ հիշատակին։

Նրանց թափած արյունը իզուր չէր, քանի որ ինչպես պատմությունն է ցույց տալիս՝ պարտված ժողովուրդների մեջքին հասնող մտրակի հարվածները դառնում են վերելքի նոր ավետիսներ….

Բովանդակություն

Նախաբան…… 1

Հենասյուն 1 – Անկախ պետականություն…….. 4

Հենասյուն 2 – Քաղաքացիություն և ազգապահպանում……. 7

Հենասյուն 3 – Հոգևոր աշխարհայացք……..... 11

Հենասյուն 4 – Կառավարման համակարգ…… 17

Հենասյուն 5 – Բանկային և ֆինանսական համակարգ…….. 24

Հենասյուն 6 – Քաղաքական-տնտեսական համակարգ……. 26

Հենասյուն 7 – Արդյունաբերություն և գյուղատնտեսություն…… 32

Հենասյուն 8 – Գիտություն և տեխնոլոգիա……... 35

Հենասյուն 9 – Կրթություն և մեդիա…… 37

Հենասյուն 10 – Մշակույթ…… 40

Հենասյուն 11 – Առողջապահություն և բնապահպանություն……... 42

Հենասյուն 12 – Զինված ուժեր և ազգ-բանակ…… 45

Հենասյուն 13 – Մեր թշնամիները և նրանց օրակարգը…….. 50

Հենասյուն 14 – Հայրենադարձություն…… 55

Հենասյուն 15 – Արտաքին դիվանագիտություն……... 57

«Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշը…… 64

Վերջաբան…….. 66

«Հոսանք»-ի և նրա Առաջնորդի մասին…… 71

Ինչո՞ւ և ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին…… 75

Նախաբան

Ամեն ազգ իր պատմության մեջ ունենում է օրհասական ու շրջադարձային ժամանակներ, և մենք կարծում ենք, որ հայ ազգը իր պատմության ամենաօրհասական, բայց նաև իր ամենաշրջադարձային ժամանակներն է ապրում: Ներկա գրեթե բոլոր իրադարձությունները մեզ ցույց են տալիս, որ Հայաստանը երբեք չի մտել միջազգային հակաարիական ուժերի «Համաշխարհային նոր աշխարհակարգի» ծրագրերի մեջ՝ որպես ինքնիշխան, անկախ և հզոր պետություն: Այն, կարծես թե միշտ խոչընդոտ է համարվել բոլոր առումներով: Մենք տեսանք, թե ինչպես 2020թ.-ի 44-օրյա դավադիր պատերազմի ժամանակ Արցախը դրվեց ռուս-թուրք-սիոնիստական դաշինքի զոհասեղանին, և սա մեզ համար պարզ է, որ Արցախի դեմ դավադրությունը ուղիղ դավադրություն էր հայկական անկախ պետականության դեմ, և դրա վերջնական նպատակը Հայոց ցեղասպանությունը ավարտին հասցնելն է: Այդ է պատճառը, որ մեր մեջքը կոտրելուց հետո հիմա նրանց աչքերը սևեռվել են մեր ողնաշար Սյունյաց աշխարհի վրա, քանի որ գիտեն՝ առանց Սյունիքի չի լինի Հայաստանը:

Բացի արտաքին վտանգներից՝ կան, իհարկե, անթիվ ներքի՛ն խնդիրներ, ինչպես, օրինակ, պետական ու բանկային կոռումպացված համակարգ, դավաճանական ու հակահայ իշխանություն, ժամանակավորապես հաշմանդամ դարձած բանակ և ազգին պառակտող ու շփոթեցնող հարյուրից ավել կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնց մեծ մասը օտարերկրյա հետախուզությունների գործակալներով լի են: Գրեթե բոլորը ծառայում են օտարերկրյա կամ այլ թշնամական շահերին, և նրանք, ովքեր այդպիսին չեն, միասնության անիմաստ և անբովանդակ կոչեր են անում՝ առանց իրենցից որևէ լուրջ բան ներկայացնելու: Մեր օրերում բոլոր մեծ կուսակցությունները առերևույթ գուցե միմյանց դեմ պայքարեն հասարակ ու չնչին հարցերի շուրջ, բայց կարևոր հարցերի շուրջ նրանք գրեթե միշտ ենթարկվում են նույն համակարգի տերերին: Սա առաջացնում է այժմյան ներքին քաղաքական խայտառակ թոհուբոհը, որի պատճառով այդ կուսակցություններն ու կազմակերպությունները հանրության լայն զանգվածներին վստահություն չեն ներշնչում: Ավելի կոպիտ ասած՝ զարշանք են ներշնչում:

Յուրաքանչյուր գիտակից մարդ կարողանում է պարզ տեսնել, որ ներկա պղծված քաղաքական ու հասարակական համակարգը, որը տիրում է Հայաստանում և ողջ քաղաքակիրթ աշխարհում, չի կարողանում անվտանգություն ապահովել, իմաստ տալ ու

երջանկություն բերել քաղաքացիների համար։ Դրա համար վստահ ենք, որ այն թղթե տնակի պես կտապալվի, բայց մենք պետք է ամեն ինչ անենք, որ այդ տապալման ընթացքում չտուժեն մեր ազգն ու հայրենիքը։

Շատերին թվում է, թե այլևս հնարավորություն չունենք հզորանալու, և անիմաստ է նույնիսկ մի բան փորձել կամ անել։ Դրան հետևում են անտարբերությունը և արտագաղթելու մտքերը, որոնք անդառնալի վնասներ են հասցնում մեր հայրենիքին։ Սակայն, մենք հավատում ենք, որ քանի դեռ հայ ազգը շունչ է քաշում, կարող է ոտքի կանգնել, եթե կա ոտքի կանգնելու երկաթե կամք։ Հայը աշխարհին բազմիցս իր բազկի ուժով ցույց է տվել, որ, երբ միասնական է լինում ու հույսը դնում միմիայն իր վրա, դառնում է անհաղթ։

Եթե մեր երազանքը ընդամենը անորոշ ցանկություն չէ, եթե մենք բացարձակապես նպատակադրված ենք այն ի կատար ածելու, ապա ոչինչ մեզ չի կարող կանգնեցնել։ Հասկանում ենք, որ առայժմ մեր ցեղի հոգին ժամանակավորապես քնած է, բայց դա երկար չի տևելու։ Ցեղի հոգին վաղ թե ուշ կզարթնի և կցնցի ողջ աշխարհը։ Համոզված ենք, որ լուսահոգի Սպարապետ Վազգեն Սարգսյանն էլ էր դրան հավատում, երբ ասում էր՝ «21-րդ դարը, անկասկա՛ծ, մերն է լինելու»։

Այն ամբողջ տառապանքի ու քաոսի սերմերը, որոնց պտուղները քաղում ենք այսօր, շատ վաղուց են ցանվել։ Գիտակցում ենք, որ այն ամենը, ինչ մեր դեմ արվել է դարեր շարունակ՝ մեզ պառակտված պահելու համար, ունենալու է հուժկու հակազդում, քանի որ մեխանիկայի երրորդ օրենքը մեզ հուշում է՝ ամեն ազդում ունի հավասար և հակառակ հակազդում։

Այդ պառակտման հակազդումը հենց հոսանքն է՝ մասնիկների ուղղորդված շարժումը, որը կարգ ու կանոնի նախադրյալն է։ Առանց հոսանքի՝ չեն կարող լինել համախմբում և քաղաքական ու հասարակական համաձայնություն։ Մեր թշնամիները որքան էլ ուզեն, չեն կարող մեզ պառակտել, եթե մեր մեջ լինի համախմբող գաղափարական հոսանք։ Հիմա ապատեղեկատվական հեղեղի պատճառով հասարակության մեջ գագաթնակետին է հասել խառնաշփոթը, պառակտումը և քաոսը, դրա համար, առավել քան երբևէ, մեր ազգին պետք է այդ համախմբման հոսանքը։

Եթե ազգի մտավորականությունը գաղափարապես ճիշտ ուղու վրա դրվի, ժողովրդի մնացած մասն էլ կհետևի, և միասնությունը ինքնըստինքյան կհաջողվի։ Նորաստեղծ ցեղակրոն շարժման՝ «Հոսանք»-ի առաքելությունը ազգին հենց այդ ճիշտ ուղու վրա դնելն է՝ ճշմարտությունը քարոզելով ու ազգանպաստ գործողություններ կատարելով։ Եթե ազգովի նույն կամքը չունենանք, չենք կարող հոսանքը ստեղծել, որը անհրաժեշտ է մեր ազգի միասնության համար։ Մեր պայքարում մեր կամքը պետք է լինի մեր ազգի հավաքական կամքի արտացոլումը։ Հետևաբար, մեր գլխավոր նշանաբաններից մեկն է՝ «Մեկ Ազգ, Մեկ Պետություն, Մեկ Կամք»։

Տեսնում ենք աշխարհում ահագնացող անկայուն վիճակը, որից բնավ լավ հոտ չի գալիս։ Այդ ամենը կանխատեսելով՝ հավատում ենք, որ մի նոր դարաշրջան է բացվելու մարդկության համար, հատկապես՝ արիական ցեղի համար, և այդ է պատճառը, որ գրվել է մի նոր քաղաքական ծրագիր, մի նոր հավատամք, որը բովանդակությամբ ու էությամբ տարբերվում է Հայաստանում առկա մյուս բոլոր քաղաքական ծրագրերից, իսկ «Հոսանք»-ը բովանդակությամբ ու էությամբ՝ մյուս քաղաքական շարժումներից։ «Հոսանք»-ը ժամանակավոր նպատակով անփութորեն չի հիմնադրվել, որպեսզի իր հայրենակիցներին խաբելով ու կեղծ հույսեր տալով իշխանության գա, ինչպես տեսնում ենք մյուս կարճատես ու գաղափարապես սին քաղաքական կազմակերպությունների մոտ։ Ոչ էլ այն միտումով

է հիմնադրվել, որ դրոշակ ծածանելով՝ անկապ ու դատարկ հայրենասիրական կոչեր անի։ «Հոսանք»-ը հիմնադրվել է այն հեռատես նպատակով ու տեսլականով, որ կարողանա նոր դարաշրջանի համար Հայաստանում նոր գաղափարներ ներկայացնել ու առաջ տանել։ Այդ գաղափարներն էլ այս հավատամքում ներկայացվել են աքսիոմատիկ ձևով՝ էվկլիդական տրամաբանությամբ ու հերթականությամբ։ Շատերն են խոսում ազգային պետություն կերտելու մասին, բայց գրեթե ոչ ոք հստակ չի նշում, թե ինչպիսին պետք է լինի այդ ազգային պետությունը։ Չեն նշում, որովհետև իրականում չեն էլ կարողանում պատկերացնել։ Չունեն տեսլական և զուրկ են տրամաբանությունից և երևակայությունից, սակայն մեզ համար չկան այդ խնդիրները։

Հետևյալ տասնհինգ հենասյունները ամենակարևոր կետերն են, որոնց մասին մենք պետք է ճիշտ դիրքորոշում ունենանք, և որոնց գաղափարների վրա կկառուցվի ապագա ամուր ու հաղթող հայ-արիական պետությունը։ Բոլոր հենասյուններում մեր գաղափարները իրար լրացնում են։ Պետք է մեր շարժման գաղափարական հիմքը ամուր կառուցվի, և տեսլականը ջրի պես ջինջ լինի, որպեսզի շարժումը անպարտելի դառնա։

Հենասյուն 1

Անկախ պետականություն

Հայաստանի ինքնիշխանությունն ու անկախությունը պետք է ամեն գնով պահպանվի, և դա երբեք չպետք է զիջենք՝ դառնալով ինչ-որ գերտերության գաղութ կամ ընդամենը տարանցիկ երկիր: Մեր նպատակն է հայ ազգի համախմբումը հզոր հայկական պետության մեջ, որը ապագայում կընդգրկի ողջ Արցախն ու մեր լեռնաշխարհի մյուս հողերը: Սակայն, անկախ պետականության պահպանումը ոչ այնքան նպատակ է, որքան լավագույն միջոց, որով կարող ենք երաշխավորել մեր ազգի ու հայրենիքի շարունակական գոյությունն ու զարգացումը:

Անկախությունը մեզ համար սրբություն է, իսկ պետականությունը՝ գերագույն արժեք, որը ազգին օղակի պես իր հայրենիքի հետ է կապում: Պետությունը անոթ է, որի պարունակությունը ազգն է, և այդ անոթը կարող է իմաստ ունենալ, եթե կարողանա պահպանել և պաշտպանել իր ներսում գտնվող նյութը, հետևաբար՝ պետությունը պարտավոր է ծառայել ազգին ու առաջ տանել հայրենիքի շահերը: Ահա մեր սուրբ երրորդությունը՝ «Ազգ, Հայրենիք, Պետություն»:

Երբ թերթում ենք հայոց պատմության էջերը, մեզ պարզ է դառնում մեկ կարևոր բան, որ մեր ազգի ողջ պատմությունը անկախ պետականություն ձեռք բերելու ու պահպանելու պայքար է: Իրականում դա բոլոր ազգերի պատմությունն է, բայց կարծես թե մեր պարագայում դա ավելի ակնհայտ է, որովհետև մենք աշխարհի ամենահին ազգերից մեկն ենք ու բազմաթիվ անգամ կորցրել և նորից ձեռք ենք բերել մեր անկախ պետականությունը: Մենք շատ արյուն ենք թափել այդ անկախությունը կորցնելու և նորից ձեռք բերելու ժամանակ: Առհասարակ ամեն ազգի անկախության ծառը ջրվում է իր հերոսների ու իր թշնամիների արյամբ:

Աշխարհում կան հազարավոր ազգություններ, որոնք անընդհատ պայքար են մղում մի բուռ հող ունենալու և այդ մի բուռ հողի վրա անկախ պետականութուն կերտելու համար: Աշխարհը գործում է «մեկ արյուն՝ մեկ հողի» սկզբունքով: Դա նշանակում է, որ հողից ավելի կարևոր ռեսուրս չկա այս աշխարհում, ու միայն ուժեղներն են արժանի հող ունենալուն, հատկապես՝ մեր լեռնաշխարհի նման դրախտավայր ու բերրի հող: Որքան շուտ գիտակցենք այս աքսիոմատիկ ճշմարտությունը, այնքան ավելի լավ կլինի մեզ և մեր ապագա սերունդների համար:

Մենք այս պահին կանգնած ենք մեր անկախությունը կորցնելու եզրագծին, և մենք մեր մեջ տոկունություն պիտի գտնենք, որ վճռական պայքար մղենք այն բոլոր ուժերի դեմ, որոնք մեզ հասցրել են այս եզրագծին:

Եթե կան մարդիկ, որոնք միամտաբար կարծում են, որ, եթե Հայաստանը իր անկախությունը զիջելով ինչ-որ գլոբալիստական միություն մտնի, մենք իբր «ավելի լավ ենք ապրելու» ու «ավելի ապահով ենք լինելու», ապա չարաչար սխալվում են: Մեր այս նվաստացած պահին հայրենիքի ներսից ու դրսից թշնամական քարոզչությունը մեզ ուզում է համոզել և մեզ ներարկել այն, որ արդեն անիմաստ է պայքարելը, ու պիտի միանգամից ընդունենք «անխուսափելին»: Նրանք ուզում են մեր մեջ կոտրել պայքարելու ոգին, որը մեծ մասամբ հաջողվել է մեր հասարակության փոքրոգիների մոտ, որպեսզի առանց որևէ պայքարի՝ մենք սկուտեղի վրա մեր անկախ պետականությունը հանձնենք ինչ-որ գերտերության:

Դրանից մեր կյանքը միայն վատթարանալու է, քանի որ նման ձևով հանձնվելը

հետագայում միայն ավելի շատ խնդիրներ է բերելու: Մենք կկորցնենք մեր արժանապատվությունը, պատիվը և մեր հանդեպ հարգանքը, որից հետո աջ ու ձախ կօգտագործվենք բոլորի կողմից: Նա, ով իր անկախությունն ու ազատությունը զիջում է իբր ավելի լավ ու ապահով կյանքի համար, արժանի չէ ո՛չ առաջինին, ո՛չ էլ երկրորդին, և իրականում չի էլ ունենա դրանցից որևէ մեկը: Ավելի կենցաղային ձևով ասած՝ երբ մարդիկ ընտրում են մի կտոր հացի ու ազատության միջև, նրանք վերջում երկուսն էլ կորցնում են:

Սակայն, մեր ազգի մեջ դեռ կան խոհեմ, արժանապատիվ ու ազատատենչ հայորդիներ, որոնց համար անկախ պետականությունը սրբություն է, և խորը գիտակցում են նրա արժեքը: Մենք հինգ հազար տարուց ավել չենք ապրել, պայքարել ու արյուն թափելով մարտնչել մարդկության հորդաների դեմ, որպեսզի տրոյական ձիու պես մի խումբ հակահայ օտարերկրյա գործակալներ ներսից մեր երկիրը կործանելով՝ թերթեն մեր պատմության վերջին էջը: Մեր պատմությունը ապացույց է այն տիեզերական օրենքի, որ մի ազգ, որ չի ուզում մեռնել, չի մեռնում:

Եթե վաղ անցյալում եղել ենք հզոր պետություն, նշանակում է մեր գենի մեջ կրկին այդպիսին դառնալու ներուժը ունենք, ուղղակի մեզ մնում է կապ հաստատել այդ ուժի հետ: Մեր երակներում դեռ հոսում է Հայկ Նահապետի, Արգիշտիի, Տիգրան Մեծի, Պապ թագավորի, Աշոտ Երկաթի, Դավիթ Բեկի, Անդրանիկի և Մոնթե Մելքոնյանի արյունը: Հայ ազգի բոլոր հերոսների կատարած սխրանքները մեզ ոգևորում ու քաջալերում են, որ շարունակենք նրանց գործը՝ հանուն մեր ապագա սերունդների, հետևաբար՝ մենք իրավունք չունենք ձախողելու:

1991թ.-ին մենք թղթով վերականգնեցինք մեր անկախությունը, բայց Կրեմլի ու հայ գործակալների պատճառով մենք իրականում ընդամենը հետսովետական հանրապետություն կառուցեցինք, քանի որ ընդամենը պատճենեցինք ռուսական պետության ու բանակի նախագիծը՝ մերը կերտելու փոխարեն: Դրա համար պետք է այս կոպիտ սխալը շտկվի, որպեսզի մենք կերտենք իրապես անկախ հայկական պետություն՝ հայկական հոգեբանությամբ, հայկական մտածելակերպով և հայկական ոգով, որը համապատասխան կլինի մեր հայ ազգի դարավոր փորձերին ու էությանը:

Մենք այդ դե յուրեն պիտի դե ֆակտո դարձնենք՝ մեր ինքնիշխանությունը ամրապնդելով, քանի որ մեր ինքնիշխանությունից կբխի մեր անկախությունը, և մեր անկախությունից վերջապես կբխի մեր ազատությունը: Այնպիսի ազատություն, որ մենք կարողանանք մեր ճակատագրի կերտողներն ու վարպետները լինել:

Պետություն ունենալը մեզ համար ամենակարևոր բանն է, հետևաբար՝ պետք է արգելվի ամեն տեսակ քարոզչությունը, որը սպառնալիք է մեր անկախությանը և պետք է խստիվ դատվեն նման քարոզչություն անողները: Պետք է մեր աշխատանքով ու զոհաբերություններով մեր քաղաքացիների մեջ հավատ ներշնչենք, որ մենք ոչ միայն կարող ենք իրապես պահել մեր անկախությունը, այլև կարող ենք այն, հզոր պետություն կերտելով, ամրապնդել, եթե մեր ողջ ոգով պայքարենք այդ նպատակի համար: Եթե մենք զոհաբերություններ չկատարենք այս նպատակի համար, ապա այս նպատակը կզոհաբերվի մեր տկարության պատճառով:

Հողից ու անկախ պետականությունից ավելի բարձր արժեք չկա ցանկացած ազգի համար: Առանց հողի՝ հայրենիքի և պետության, ազգը չի կարող այս աշխարհում իր կամքը թելադրել, դրա համար ազգայնականը չի կարող հայրենասեր չլինել, ինչպես հայրենասերը չի կարող ազգայնական չլինել: Մի թիզ հող մեզ համար չի կարելի փոխանակել նույնիսկ տոննաներով ոսկու հետ: Յուրաքանչյուր քաղաքացի պիտի խորը գիտակցի, որ իր տունը սահմանափակված չէ իր չորս պատերով, այլ՝ իր հայրենիքի

սահմաններով, և ամեն ծառ, գետ, սար կամ լիճ իր տան մի մասն է:

Միայն այդ գիտակցությամբ քաղաքացին կիմանա, որ իր տունը սկսում է սահմանի յուրաքանչյուր դիրքից, և այդ դիրքը պարտավոր է պաշտպանել, ինչպես կպաշտպանի իր սեփական տունը: Այսպես կարելի է ոչնչացնել մեր ազգի մեջ աղետալի ու պառակտող գավառամիտ հայրենասիրությունը և պետականամետ սերունդ մեծացնել:

Մեր անկախ պետականությունը մեր աչքի լույսի պես պիտի պահպանենք, քանի որ, եթե այս անգամ կորցնենք, կկորցնենք վերջնականապես՝ այլևս հնարավորություն չունենալով այն նորից վերականգնելու: Հետևաբար՝ մեր պետականամետ նշանաբանն է՝ «Հանուն պետականության՝ նժդեհաբար»:

Հենապյուն 2

Քաղաքացիություն և ազգապահպանում

Անկախ պետության համար գլխավոր հարստությունը արժանապատիվ քաղաքացին է, ով իր պետության հանդեպ ունի անձնական մեծ պատասխանատվության գիտակցում: Յուրաքանչյուր քաղաքացի նաև պետության մի մասնիկն է ու ներկայացուցիչը, հետևաբար՝ Հայոց պետության լիիրավ քաղաքացին կարող է լինել միայն նա, ով ունի հայ-արիական արյուն: Քաղաքացիություն շնորհելու ճիշտ ընթացակարգը չափազանց կարևոր է ու հայապահպանության հիմքն է, քանի որ դա է որոշում մեր արյան մաքրության մակարդակը, որը իր հերթին որոշում է մեր հայրենիքի ժողովրդագրությունը: Հետևաբար՝ մեր կարգախոսներից մեկն է՝ «Հայաստանը՝ հայերին», այսինքն՝ Հայաստանի ճնշող մեծամասնությունը բաղկացած կլինի հայերից, ու Հայաստանի պետականությունը նախ և առաջ կծառայի բացառապես հայ ազգի շահերին: Սա ամենևին չի նշանակում, որ թշնամանք է տածվելու Հայաստանում ապրող փոքրամասնությունների, ինչպես օրինակ՝ հայ հասարակության մեջ ինտեգրված քուրդերի կամ եզդիների հանդեպ: Նրանք կշարունակեն Հայաստանի լիիրավ քաղաքացի լինել: Դեմ չենք Հայաստանում ապրող այլ սպիտակ (եվրոպացի/արիացի) փոքրամասնություններին, և նրանք կարող են շարունակել ապրել Հայաստանում ու դառնալ քաղաքացի, եթե հավատարմության երդում տան Հայաստանին ու Հայոց պետությանը, և ծառայեն Հայոց բանակում, իսկ ոչ-սպիտակները Հայաստան կարող են գալ միայն ժամանակավոր հյուրի կարգավիճակով՝ հետևելով օտարերկրացիների մասին օրենքի պահանջներին: Բացառիկ ոչ-սպիտակները, ովքեր չափազանց օգուտ են տվել մեր պետությանը կամ հերոսություն են գործել մեր հայրենիքի համար, կդառնան պատվավոր քաղաքացիներ և իրենց ընտանիքների հետ Հայաստանում ապրելու իրավունք կունենան: Ովքեր չեն ծնվել Հայաստանում, բայց բավարարում են այս բոլոր որակավորումներին, քաղաքացիություն ստանալուց առաջ պետք է գոնե հինգ տարի բնակված լինեն Հայաստանում:

Իր ազգի ապագայի մասին մտածող ամեն պետություն պիտի մտածի իր երկրի ժողովրդագրության մասին և պարտավոր է պաշտպանել իր սահմանները ոչ միայն ռազմական տեսանկյունից, այլև՝ քաղաքացիական տեսանկյունից: Մենք դեմ ենք ոչ միայն Հայաստանի թրքացմանը, այլև՝ Հայաստանի պղտորմանը տարբեր տեսակ օտար ոչ-սպիտակ ցեղերով: Հետևաբար՝ բոլոր ոչ-սպիտակ ներգաղթյալների հոսքը Հայաստան անհապաղ պետք է կասեցվի, և նրանք, ովքեր արդեն Հայաստանում բնակվում են, պիտի խաղաղ ու մարդասիրական ձևով արտաքսվեն մեր հայրենիքից: Դա ոչ միայն օգուտ կտա մեր երկրին, այլև՝ այդ ներգաղթյալների երկրներին, որովհետև այդ արտագաղթերի պատճառով իրենց երկրներից դուրս են գալիս բժիշկներ, գիտնականներ և այլ մասնագետներ, որոնց կարիքը ունեն հենց իրենց երկրները:

Ցավոք, 1945թ.-ից ի վեր ցեղերի ուսումնասիրությունը տաբու է դարձել ողջ արիական աշխարհում, որի արդյունքում շատերի մոտ ցեղային հարցերում խառնաշփոթ է առաջացել, և մենք այս պահին շատ չենք կարող ծավալվել. դրա համար մենք «արիացի» ու «սպիտակ» բառերը փոխարինաբար ենք կիրառում, որպեսզի մարդիկ հասկանան դրանց նույնությունը: Ամեն դեպքում ապագայում կունենանք այնպիսի գիտություն, որով բավականին հեշտությամբ կկարողանանք ըստ ռասայի գնահատել պոտենցիալ քաղաքացիներին, որպեսզի ճիշտ օրենքներ սահմանվեն ու ճիշտ որոշումներ կայացվեն

քաղաքացիության հարցերում:

Ոչ-սպիտակ ներգաղթյալների համար դարպաս բացողները պետք է խստիվ դատվեն ու պատժվեն: Օրենսդրությամբ կարգելվեն սպիտակների ու ոչ-սպիտակների միջև խառը ամուսնությունները: Օրենքով կդատվեն ու կպատժվեն նաև նրանք, ովքեր քարոզում են բազմամշակութայնություն և խառը ամուսնություններ, որին մենք բացահայտ դեմ ենք, քանի որ դրանք ոչնչացնում են բնության մեջ գոյություն ունեցող բազմազանությունը:

Մենք առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ լավ սահմանները ստեղծում են լավ հարևաններ, և ամեն մեկը իր տունը պիտի պահի: Պնդում ենք, որ ամեն մեկս միայն մեր ազգին ծառայելով՝ կարող ենք ծառայել ընդհանուր մարդկությանը ու դատապարտում ենք «հավասարություն» քարոզող կեղծ մարդասիրությունը: Ընդհանրապես զավեշտալի ենք համարում «հավասարություն» հասկացությունը, քանի որ աշխարհում ու բնության մեջ չկա ոչ մի հավասարություն: Նման կեղծ գաղափարներ քարոզելը մարդկանց խաբելու ու մոլորեցնելու համար է միայն:

Հայաստանը Բաբելոնի վերածելու ո՛չ մտադրություն ունենք, ո՛չ էլ՝ ցանկություն: Մեզ պետք չէ ստրկական դասակարգ՝ էժան աշխատուժով քողարկված, քանի որ մենք, մեր թևքերը քշտելով, պիտի անցնենք գործի և մեր սեփական ուժերով շենացնենք մեր երկիրը: Մենք պիտի մեր կոյուղիները մաքրենք, մեր աղբը հանենք, մեր շենքերը կառուցենք, մեր բեռնատարները վարենք, մեր ասֆալտը փռենք, մեր հողերը մշակենք՝ առանց այլ ազգերից կախված լինելու, քանի որ դրանք չանելով՝ հետագայում մենք ինքներս մեզ ենք ստրկացնելու, որովհետև կախված ենք լինելու ոչ-սպիտակներից: Մեր սեփական ուժերով ամրոցի նման կկառուցենք և պալատի պես կշենացնենք մեր երկիրը:

Արյան մաքրության պահպանումը չափազանց կարևոր է մեզ համար, որովհետև, երբ բարձր ցեղը խառնվում է ավելի ցածր ցեղի հետ, արդյունքում բարձր ցեղը իջնում է ցածր ցեղի մակարդակին՝ կորցնելով բարձր ցեղի հզորությունը: Պատմության մեջ մշակույթների և քաղաքակրթությունների վերացման թիվ մեկ պատճառը ոչ թե պատերազմներն են եղել, այլ՝ արյան պղտորումը, որին հետևել է նաև հասարակության դեգրադացիան:

Մարդկությունը բաժանված է մատների վրա հաշվվող մի քանի ցեղի, որի ամենագեղեցիկ, ամենահզոր, ամենաստեղծագործ ցեղը սպիտակ ցեղն է, որի գիտական անունը Արմենոիդ է (և ոչ՝ արհեստածին «կովկասոիդ» անվանումը): Արիական ցեղը ի սկզբանե բաղկացած է եղել հանճարեղ գիտնականներից, հետազոտողներից, ռազմիկներից, արվեստագետներից, ճարտարապետներից, կառուցողներից, իմաստասերներից և նվաճողներից: Մյուս բոլոր ցեղերի ստեղծած մշակույթներն ու քաղաքակրթությունները պարզապես անհամեմատելի են արիական բարձր մշակույթի ու քաղաքակրթության հետ:

Մեր հայ ազգը պատկանում է մյուս բոլոր ցեղերի մեջ փոքրամասնություն կազմող այս սպիտակ ցեղին, որը այս պահի դրությամբ ամենավտանգված ցեղն է աշխարհում, և սա կարող ենք հիմնավորել բազմաթիվ վիճակագրական փաստերով: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ, եթե այսպես շարունակվի, 20 տարում սպիտակները իրենց երկրներում կդառնան փոքրամասնություն: Սա պարզապես ապշեցուցիչ փաստ է, որը պետք է շատ լուրջ ընդունվի: Աշխարհում կա գրեթե 8 միլիարդ մարդ, և այդ 8 միլիարդից ընդամենը 500 միլիոնն է սպիտակ, ու հետզհետե այդ թիվը նվազում է ցածր ծնելիության ու խառը ամուսնությունների պատճառով, մինչդեռ ոչ-սպիտակների թիվը օրըստորե աճում է, ու աճում է նաև բազմաթիվ սպիտակ երկրներում՝ արագացնելով կործանարար խառը

ամուսնությունների քանակը։ Սա, կարճ ասած, աղետալի է ոչ միայն սպիտակ ցեղի համար, այլև մարդկության համար, որովհետև, եթե սպիտակ ցեղի ջահը մարի այս աշխարհում, մարդկությունը չափազանց կտուժի ու Երկիր մոլորակը հավերժ կսուզվի խավարի մեջ։ Սա պարզապես չենք կարող թույլ տալ, հետևաբար՝ սա այնպիսի հարց է, որում բացարձակապես չենք կարող զիջել։ Արիական ցեղը մարդկության առաջընթացի գլխավոր ցեղն է, և մենք՝ հայերս՝ որպես այդ գլխավոր ցեղի արմատական ազգը, մեծ պարտականություն ունենք արիական արյունը անաղարտ պահելու ու կանխելու արիական ցեղի ոչնչացումը։

Սակայն, ոչ միայն մեր ծնելիության տոկոսն է նվազել, այլև՝ մեր ցեղակիցների գենետիկ որակը, որը ևս բացասաբար է անդրադարձել մեր քաղաքակրթության վրա։ Հետևաբար՝ ազգապահպանման հիմքում նաև մեր ազգի գենետիկ որակի բարելավումն է։ Այս քայլը չենք կարող անտեսել, որովհետև, ցավոք, դարերի ընթացքում պետականություն չունենալու և շատ տարբեր տեսակ ոչ-սպիտակ ցեղերի հետ շփվելու արդյունքում չափազանց վատթարացել է մեր գենետիկ առողջությունը, և կարծում ենք՝ ցանկացած արժանապատիվ հայորդու համար այս պնդումը անակնկալ չպետք է լինի, երբ նա տեսնի մեր հասարակության դեգրադացման աստիճանը։ Արիական ազգերի դեգրադացման պատճառը, իհարկե, նաև միջազգային սիոնիստական մեդիան է, որն առնվազն հարյուր տարի է՝ տարբեր տեսակ գաղափարական թույներով վարակել է մեր հասարակությանը. գաղափարական թույները, ինչպես օրինակ, ֆեմինիզմն ու բազմամշակութայնությունը, որոնք նպաստել են ազգի լավ տարրերի նվազեցմանը՝ միաժամանակ վատ տարրերը շատացնելով։

Չափազանց հարմարավետ ու անբնական ապրելակերպն էլ փափկամորթ ու վախկոտ է դարձրել միլիոնավոր մարդկանց։ Հնագույն աշխարհում, երբ մարդիկ ավելի մոտ էին ապրում բնության դաժան պայմաններին, բնությունը ինքնըստինքյան կատարում էր բնական ընտրությունը, բայց այս ժամանակակից դարում կտրվել ենք բնությունից և իր բնական ընտրությունից։ Մի խոսքով՝ մենք դարերով գնացել ենք բնության գործընթացի դեմ, և հիմա տուժում ենք դրա պատճառով, հետևաբար՝ պետք է շտկենք այս ամենը ուղիղ և գիտական միջամտությամբ։ Եթե կարող ենք հատուկ ձևով բազմացնել ավելի որակյալ կենդանիներ, ինչո՞ւ մարդկանց հանդեպ չենք կարող նույնը անել։

Արդեն նշվեց, թե ինչպես կարող ենք կանխել ժողովրդագրական վերջնական կործանումը, սակայն գենետիկ որակի շարունակական վատթարացումը այս ժամանակակից դարում կարող ենք կասեցնել ու շտկել եվգենիկայի (կամ ցեղային հիգիենայի) սկզբունքները կիրառելով, որը պարզապես բնակչության բազմացման վերահսկումն է, և մեր դեպքում, բնականաբար, այդ վերահսկումը կնպաստի ազգի որակի բարելավմանը։ Պետք է, օրինակ, գենետիկապես ամենաորակյալ ու ամենաառողջ զույգերը ամեն ինչով աջակցվեն ու խրախուսվեն, որ շատ երեխաներ ունենան, իսկ վատառողջ զույգերը շատ չունենան։ Պետական խոշոր նպաստներ պետք է ստանան առողջ զույգերի բազմազավակ ընտանիքները։ Նաև պիտի արգելվի ու դատապարտվի առողջ զույգերի դեպքում հղիության արհեստական ընդհատումը։

Ազգային պետական մեդիան պիտի փառաբանի, իսկ պետությունը՝ պարգևատրի այն առողջ զույգերին, որոնք ունենում են չորսից ավել երեխաներ։ Սրան զուգահեռ՝ ծայրահեղ դեպքերում, պետք է ստերջացվեն հոգեկան ու ֆիզիկական հիվանդություն ունեցողները, եթե մասնագետ բժիշկներից պարզվի, որ նրանց ծանր հիվանդությունը ժառանգական է, որպեսզի նրանք իրենց վատ գենետիկան չփոխանցեն հաջորդ սերունդներին։ Տվյալ ծայրահեղ դեպքում այդ մարդը կշարունակի նորմալ ապրել,

հարաբերություններ ունենալ և նույնիսկ ամուսնանալ, բայց ոչ՝ երեխաներ ունենալ։ Մարդիկ պետք է գիտակցեն, որ երեխա ունենալը ոչ թե իրավունք է, այլ՝ արտոնություն։ Կլինեն մարդիկ, որոնք այս մոտեցումը ծայրահեղ կհամարեն, բայց մենք կարծում ենք՝ ծայրահեղական, եսասիրական ու անպատասխանատու է՝ թողնել, որ գենետիկապես վատառողջ մարդիկ ու հոգեկան հիվանդները բազմանան և իրենց երեխաները տառապեն այդ նույն թերություններով։ Եվգենիկայով մենք մեր արյունը հնարավորինս զերծ կպահենք ռասայապես անլիարժեքներից։

Այսպիսով՝ մենք կարող ենք չափազանց բարելավել մեր գենետիկ որակը ընդամենը մի քանի սերնդում, և նման սկզբունքները օրենք դարձնելով՝ մենք, ցեղային ճգնաժամ ունենալու փոխարեն, կունենանք բազմազավակ առողջ ընտանիքներից բաղկացած որակյալ ազգ։ Առանց ամուր ու առողջ ընտանիքների՝ չի կարող լինել ամուր ու առողջ հասարակություն, քանի որ ընտանիքը ցանկացած հասարակության միջուկն է։ Սա լինելու ու շատանալու անհերքելի երաշխիքն է։

Ոչ մի առողջ հասարակություն չի կարող, բնության օրենքները խախտելով, բազմամշակութային լինել։ Առողջ հասարակությունը միմիայն կարող է միատարր լինել, որի քաղաքացիները կունենան քիչ թե շատ նույն լեզուն, նույն պատմությունը, նույն մշակույթը, նույն արժեհամակարգը և նույն գենետիկան։ Միայն միատարր հասարակության մեջ ապրելու դեպքում անհատը կսիրի իր հասարակությունը և կզգա, որ ինքն ավելի մեծ բանի հետ է կապված՝ պատասխանատվություն զգալով այդ հասարակության հանդեպ։ Միատարր հասարակությունները միանշանակ ավելի շատ սեր, խաղաղություն և համերաշխություն են ունենում, քան բազմամշակութային հասարակությունները։ Բազմամշակութայնությունը ու ոչ-սպիտակների ներգաղթի վտանգը գուցե այս պահին այդքան մեծ սպառնալիք չեն մեր հայրենիքի համար, որքան, օրինակ, Եվրոպայում, ԱՄՆ-ում ու Ավստրալիայում է, բայց մենք պիտի նրանց սխալներից սովորենք ու այժմյանից նման վտանգների, այսպես ասած, «քոքը կտրենք»։ Եթե հիմա հանդուրժենք ոչ-սպիտակների ներգաղթը Հայաստան, վաղը կհանդուրժենք թուրքերի ներգաղթը՝ նպաստելով Հայաստանի թրքացմանը։

Պետությունը պետք է ապահովի և խթանի ծնելիության աճը. աճ, որը ընդհանուր առմամբ դրական ազդեցություն կունենա հասարակության համար, և առանց այսպիսի ռասայական սկզբունքների կիրառման՝ ողջ արիական քաղաքակրթությունը կգնա արյան պղտորման ու ժողովրդագրական ոչնչացման, որոնք ամեն գնով պետք է կանխվեն։ Եթե մեր թշնամիները մեզ հազարներով սպանեն, մեր քաղաքները ոչնչացնեն ու գրավեն մեր հողերը, մենք կարող ենք նոր սերունդներ ծնել, քաղաքները նորից կառուցել և մեր հողերը նորից ազատագրել, սակայն մենք չենք կարող պղծված արյունը մաքրել։ Եթե արյունը աղտոտված է այլ ցեղերի հետ խառնվելու պատճառով, այն չի կարող նորից մաքրվել։

Մենք կարող ենք արիական, արժանապատիվ ու բարձր որակի պետութուն ունենալ միայն արիական, արժանապատիվ ու բարձր դասի քաղաքացիներ ունենալու դեպքում, բայց դա կլինի միայն այն ժամանակ, երբ պետությունը իր օրենքներով երաշխավորի, որ իր ամենալավ զավակները շատանան ու զարգանան՝ հայրենիքի համար դառնալով արժանի քաղաքացիներ։

Հենապյուն 3

Հոգևոր աշխարհայացք

Ցանկացած քաղաքական շարժում հաջողության հասնելու ու երկարատև դրական արդյունք տալու համար պետք է ունենա ամուր գաղափարախոսություն ու հոգևոր աշխարհայացք, հետևաբար՝ մենք հավատում ենք, որ ցեղակրոնությունը հենց այդ գաղափարախոսությունն է, որի անվերապահ կրողներն ու դավանողներն ենք մենք: Դատապարտված է այն քաղաքական շարժումը, որը միայն նյութական հիմքեր ունի և զերծ է հոգևորից, քանի որ մեր, այսպես ասած, նյութական իրականությունը բխում է մեր հոգևորի բովանդակությունից: Մենք նաև հավատում ենք, որ մեր ազգի համախմբումը ու համերաշխությունը կարող է լինել միայն ցեղակրոնության գաղափարների շուրջ:

Եթե ուզում ենք իսկապես լուծել մեր հայրենիքի խնդիրները, նախ պետք է լավ հասկանանք դրանք, որոնք միայն քաղաքական ոլորտին չեն բնորոշ, այլ համատարած են մեր ողջ հասարակության մեջ: Քաղաքական խնդիրները ընդամենը մեր հոգևոր աշխարհում գտնվող խնդիրների արտացոլանքն են: Այդ է պատճառը, որ ազգին համախմբել ցանկացող յուրաքանչյուր քաղաքական շարժում նախ և առաջ պետք է ունենա հոգևոր բնույթ և հիմք՝ ճշգրիտ գիտություններով հիմնավորված:

Դարեր շարունակ արհեստականորեն թշնամանք է սերմանվել գիտնականների ու հոգևորականների կամ մոգերի միջև, բայց մենք ոչ թե կարծում ենք, որ հոգևորը և գիտությունը իրարամերժ են, այլ վստահ ենք, որ շատ բնական ձևով իրար համապատասխան են: Նմանապես կարծում ենք, որ արարչագործությունն ու էվոլուցիան էլ իրար լրացնում են՝ հակասելու փոխարեն: Այսինքն՝ Արարիչը արարել է մարդկության ցեղերին և տարբեր կենդանիների, որոնք ժամանակի ընթացքում զգալի փոփոխություններ են կրել: Հարկավոր է այստեղ նշել, որ հոգևորականը նա չէ, ով ընդամենը աղոթքներ է արտասանում և ծիսակարգեր կատարում: Հոգևորականը շատ բարձր գիտակցություն ունեցող մարդն է, ով սանձահարել է էգոն և խորությամբ հասկացել է այս կյանքի իմաստը: Սրանից նաև հետևում է այն փաստը, որ միայն ազգային գաղափարներ կրող մարդը կարող է հոգևոր լինել, քանի որ միայն նման գաղափարներով ապրող մարդը կարող է իսկապես իմաստալից կյանքով ապրել: Արյունը և հոգևորը չենք կարող իրարից տարանջատել, որովհետև հոգևոր կյանքը բխում է արյունից:

Խորը հավատ ունենալը, որը հիմնված է ճշմարտության վրա, չափազանց կարևոր է, որովհետև մեր ներքին հավատից բխած մտքերով ստեղծում ենք մեր իրականությունը, քանի որ իրականությունը օբյեկտիվության ու սուբյեկտիվության համադրությունն է: Օբյեկտիվ փաստեր կան, որոնք չեն կարող փոխվել, ինչպես, օրինակ, կատարված պատմական դեպքերը, բայց մենք մեր սուբյեկտիվ համոզմունքներով ու գործողություններով կարող ենք նոր պատմություն ստեղծել, որոնք կարող են կա՛մ դրական լինել, կա՛մ բացասական, և դա կախված կլինի նրանից, թե ինչպիսին է մեր ներքին աշխարհը: Մենք չենք կարող մեր պայքարում հաջողության հասնել, եթե չունենանք խորին ճշմարիտ հավատ՝ մեր ցեղի, բնության ու տիեզերքի հանդեպ:

Զազրելի է այն իրողությունը, որ մեր քաղաքական դաշտում էությամբ արևմտամետ լիբերալները, սովետամետ նեոբոլշևիկները, և նման այլ խառնակիչներ հանդես են գալիս ազգայնական «մորթիով» ու մարդկանց խաբելով՝ մոլորեցնում և շեղում են ճշմարտությունից ու իսկական ազգայնականութունից: Շեղում են նաև իսկական ցեղային ու դրանից բխող հոգևոր արժեքներից: Եթե իսկական գիտնականներն ու հոգևոր մարդիկ

խառնվեին քաղաքականությանը, այսքան տգետ ու անհոգի մարդիկ չէին լինի մեր հասարակությունում:

Բարեբախտաբար մեր հերոս նախնիները՝ ի դեմս Նժդեհի ու Հայկ Ասատրյանի, մեզ համար հիմնադրել են ցեղակրոնությունը՝ արյան և հողի դավանանքը, որը հենց մեր ազգին պակասող այդ հոգևոր հիմքն է՝ մեր հիվանդությունների դեղամիջոցն ու աշխարհայացքի կողմնացույցը, որով մենք կկարողանանք գտնել ճիշտ ճանապարհը և հասնել մեր նպատակին: Ցեղակրոնությունը, պարզ ասած, բնության օրենքների կիրառումն է հասարակության մեջ: Հետևաբար՝ մենք պարտավոր ենք նրանց գաղափարները նորից կյանքի կոչելով՝ վերածել դրանք հզոր շարժման և հասցնել պետական աստիճանի, տանել դեպի վերջնական հաղթանակ: Մեզ փոխանցվել է մի վեհ գաղափարախոսություն, և մեր նպատակն է այդ գաղափարին տալ միջազգային ճանաչողություն: Մեր առաքելությունն է այդ գաղափարը վերածելու համաշխարհային շարժման:

Պատմությունից լավ գիտենք, որ, երբ Հայաստանը պետականորեն առաջին քրիստոնյա երկիրը դարձավ, բավականին վնաս կրեց մեր հին արիական ու հեթանոս մշակույթը, ու նաև դրա պատճառով հազար տարի արիական աշխարհում տիրեց խավար դարաշրջանը՝ այսպես կոչված ինկվիզիցիան: Սակայն, անկախ այդ ամենից, մենք սխալ ենք համարում քրիստոնեության և եկեղեցու հանդեպ թշնամանք սերմանելը, որովհետև մենք դեմ ենք դասակարգերի, գաղափարախոսությունների ու կրոնների պատճառով ազգին պառակտելուն, որը հետո կարող է քաղաքացիական պատերազմի հիմք դառնալ: Հավատում ենք, որ այն քրիստոնեությունը, որը փաթաթվեց մեր պարանոցին չորրորդ դարի սկզբին, այն նույն քրիստոնեությունը չէր, որը քարոզում էր, Նժդեհի ասած, Նազովրեցին, որը, մեր համոզմամբ, արիացի էր: Նրա՝ իսկական արիական ու տիեզերքի օրենքներին համապատասխան քարոզները դիտմամբ խեղաթյուրվեցին ու մատուցվեցին սկզբից մեր ազգին և հետո ողջ արիական ցեղին՝ մեր քաղաքակրթությունը թուլացնելու նպատակով: Դրա համար կարծում ենք, որ քրիստոնեությունը ու առհասարակ եկեղեցին պետք է արիականացվեն ու առնվազն վերափոխվեն: Կասկած չունենք, որ արիական քրիստոնեությունը ու հեթանոսությունը ամենևին չեն հակասի ցեղակրոնության աշխարհայացքին: Ցեղակրոնությունը ոչ լրիվ հեթանոսական է, ոչ էլ՝ լրիվ քրիստոնեական, բայց միաժամանակ երկուսն էլ է, քանի որ երկու կրոնների իսկական հիմքում արիական արժեհամակարգն է ու արիական վեհ ապրելակերպի քարոզը:

Մենք հավատում ենք, որ Վահագնը և մեր դիցաբանության բոլոր մյուս աստվածները ընդամենը բնության տարբեր հատկությունների արտահայտություններն են՝ Արարչի տարբեր ներկայացուցիչները: Երբ այդ ցեղակրոն տեսանկյունից նայենք, կտեսնենք, որ քրիստոնյաները և հեթանոսները կարող են շատ համերաշխ ձևով իրար հետ համագործակցել՝ հանուն ազգի ու հայրենիքի:

Ներկա բոլոր մեծ ու տարածված կրոնները՝ քրիստոնեությունը, մահմեդականությունը, հինդուիզմը և բուդդիզմը ընդհանրապես չեն խոսում արյան ու հողի մասին, և նախատեսված են բոլոր մարդկանց համար, ի տարբերություն, օրինակ, հուդայականության, որը նախատեսված է միայն հրեաների համար: Մի կրոն, որը չի խոսում ազգության ու հայրենիք ունենալու կարևորության մասին, չի կարող մեր ազգին ու հայրենիքին օգուտ տալ: Ցեղակրոնությունն էլ է տիեզերական կրոն, բայց ի տարբերություն վերանոշյալ չորս մեծ կրոնների՝ այն չի քարոզում կեղծ համամարդկային արժեքներ, որտեղ արհամարհվում է ցեղերի կարևորությունը, այլ յուրաքանչյուր ցեղի

համար քարոզում է իր ցեղային արժեքների կրումը՝ դրա ընթացքում սատարելով բոլոր ցեղերին ընդգրկող համամարդկային արժեքներին։

Մենք դեմ ենք աթեիզմին, բայց մեր պատկերացումը Աստծո մասին տարբեր է։ Մեզ համար Աստված անողոք ինչ-որ մեկը չէ՝ գահին նստած՝ մարդկանց աջ ու ձախ պատժելով, հրեաների Հին Կտակարանի Եհովայի նման։ Մեր պատկերացմամբ Աստված, ավելի ճիշտ՝ Արարիչը, անսահման գիտակցությունն է՝ տիեզերքի հոգին, և մեր հոգին ևս այդ տիեզերական գիտակցության մի չնչին մասն է։ Արարիչը այն տիեզերական կյանքի ուժն է, որի շնորհիվ ամեն ակնթարթ արարում է տեղի ունենում։ Իրականում Արարիչը արթուն է աշխարհում բոլոր էակների մեջ՝ մարդ, թե՝ կենդանի։ Այդպիսով՝ կարող ենք համարել, որ մենք ինքներս Արարչի դրսևորումներն ենք, և աստվածակերպ Արիական ցեղը՝ Արարչի ամենակատարյալ դրսևորումն է՝ բնության գլուխգործոցը։

Մենք հոգի ենք, որ ունենք մարմին, ոչ՝ հակառակը, և յուրաքանչյուրիս հոգու բաղձանքն է մեր սեփական կյանքը, որը ընդամենը մի ակնթարթ է տիեզերքի պատմության համար, կապել մեզնից ավելի վեհ բանի հետ։ Ժամանակակից աշխարհի գերհագեցած ու հարմարավետ կյանքը մարդկանց կտրել է այդ շատ կարևոր գաղափարից։ Բոլորս ցանկանում ենք լավ ու հարմարավետ կյանքով ապրել, բայց շատ ավելի կարևոր է իմաստալից, արդյունավետ ու արտառոց կյանքով ապրելը, քանի որ, ինչպես Նժդեհն է ասել, չկա ավելի զարհուրելի բան, քան՝ աննպատակ գոյությունը։ Այդ աննպատակ գոյությունից է առաջանում նողկալի օտարացումը, հեդոնիզմը, նիհիլիզմը, աթեիզմը ու նյութապաշտությունը, որից առաջանում են թմրամոլությունը, խաղամոլությունը, և նման այլ մոլություններ։ Նման երևույթների անդադար քարոզչության պատճառով, մարդկանց մեծ մասի կրոնը դարձել է նյութապաշտություն, իսկ Աստվածը՝ փող։ Այս բոլորի թշնամին է մեր հոգևոր աշխարհայացք ցեղակրոնությունը։ Հետևաբար, մենք հավատում ենք, որ կյանքի նպատակն է՝ քո ողջ կամքով անձնվիրաբար պայքարել մի վեհ գաղափարի ու առաքելության համար և վայելել այդ պայքարը, քանի որ իսկական ուրախության բանալին կարող ենք գտնել ճամփորդության մեջ, ոչ թե՝ նպատակակետի։

Ինչպես ծառը չի կարող գոյություն ունենալ առանց արմատների, այնպես էլ՝ մարդը, և մարդը կենդանիներից էականորեն տարբերվում է հենց նրանով, որ կարողանում է գիտակցել իր արմատների գոյությունը, որ ամրացրել են իր նախահայրերը։ Բնության մեջ ամենախորը ու պինդ արմատներն ունեն այն ծառերը, որոնք ամենաշատն են դիմադրություն ցուցաբերել ուժեղ քամիներին, որը նպաստում է ծառի մեծանալուն. նույնը կարող ենք ասել մարդկության ցեղերի մասին՝ որքան երկար ու ուժեղ է «քամիների» դեմ պայքարել ցեղը, այնքան ավելի խորանում ու պնդանում են նրա արմատները, որի շնորհիվ՝ ավելի ամուր ու հզոր է դառնում։ Կարճ ասած՝ հարմարավետությունը ծնում է թուլություն, իսկ պայքարը՝ հզորություն։

Այո՛, մենք գերադասում ենք հնարավորինս ապրել հոգևոր կյանքով ու մերժում ենք նյութապաշտությունը՝ լավ գիտակցելով, որ նյութերի անիմաստ կուտակումն ու սպառողականությունը մեր կյանքում մեզ ոչ մի երկարատև ուրախություն չի կարող պատճառել, բայց նյութական աշխարհը, բնակաբանաբար, չենք կարող մերժել, քանի որ, այսպես ասած, ապրում ենք նյութական իրականության մեջ, և հանուն ցեղի՝ նյութական ռեսուրսներ ձեռք բերելը մեր կյանքի ամենակարևոր առաջադրանքներից մեկը պետք է լինի։ Այսինքն՝ նյութապաշտություն չենք համարում, եթե նյութական ձեռքբերումներն ու հարստանալը մեզ համար միջոց է և ոչ երբեք՝ ինքնանպատակ մի գործողություն։ Գրեթե առանց բացառության՝ բոլոր անհատներն ու ազգերը ձգտում են այս աշխարհում ուժ ունենալ՝ տարբեր տեսակ ռեսուրսներ ձեռք բերելով, որպեսզի իրենց կամքը թելադրեն

իրադարձություններին, և մեզ համար էլ դա բացառություն չպետք է լինի։

Այս նյութական աշխարհում բոլորս ինչ-որ ձևով կարող ենք օգուտ տալ մեր հայրենիքին։ Հանդիսատես լինելու փոխարեն՝ բոլորս կարող ենք մասնակից լինել պատմության գործընթացին. անկախ նրանից՝ ուսուցիչ ենք, թե՝ ոստիկան, բանվոր ենք, թե՝ գրող կամ բազմազավակ մայր, բոլորս, մեր լուման ներդնելով, կարող ենք զարգացնել մեր երկիրը, մեր քաղաքակրթությունը, և նպաստենք մեր հավերժական ցեղին։ Չարը կարողանում է հաղթել ու վնաս հասցնել միայն նրա համար, որ բարի ու արժանապատիվ մարդիկ անգործություն են ցուցաբերում։

Մեր յուրահատուկ ու անցողիկ կյանքը հավիտենական ու մնայուն ցեղին ծառայեցնելով միայն՝ կարող ենք անմահանալ։ Դա է անմահության բանալին ու միակ ճանապարհը, հետևաբար՝ հանուն ցեղի առաջընթացի՝ պետք է շատ արդյունավետ ապրենք, որովհետև մենք մեզ հետ ոչինչ չենք կարող տանել այս աշխարհից. մենք միայն կարող ենք այս աշխարհում որևէ բան թողնել, և այդ թողածը պետք է լինի ազգանպաստ աշխատանքը հանուն ցեղի։ Ազգանպաստ աշխատանքը միայն առաքինի ու արդար աշխատանքը կարող է լինել։ Ամեն մարդ իր նախահայրերի կծիկն է, և մարդու գեների մեջ խտացված է իր ազգի ողջ անցյալը։ Մենք մեր հայրերով նայում ենք դեպի անցյալ, իսկ որդիներով՝ դեպի ապագա, հետևաբար՝ մեր պարտականությունն է, որ այն ամենը, ինչ ստացել ենք մեր հայրերից՝ բարելավենք, զարգացնենք ու փոխանցենք մեր որդիներին։ Կյանքը հրաշալի նվեր է, որը պետք է գնահատենք և օգտագործենք հենց այս ճիշտ նպատակի համար։ Այսպիսի մտածելակերպով մեր կյանքում, միայն ակնթարթային հաճույքների փոխարեն, կունենանք երկարաժամկետ բավարարվածության զգացում, և դա այն է, որին մենք բոլորս իսկապես ձգտում ենք։

Ամենակարևորը՝ մերժում ենք պարտվողականությունը, օտարամոլությունը, թուլությունը, ստրկամտությունը, որոնք մեր ազգին շղթայված են պահել դարեր շարունակ։ Մերժում ենք նաև ստախոսությունը և հասկանում ենք՝ այս կեղծիքների դարաշրջանում ճշմարտություն խոսելը և ճշմարիտ գործելը իսկապես դարձել են հեղափոխական գործողություններ։ Մեզ համար կարևոր է ճի՛շտ լինելը և ոչ՝ քաղաքականապե՛ս ճիշտ լինելը, քանի որ մեզ համար ճշմարտությանը հավատարիմ մնալը առաքինություն է, և ճշմարտությունն ասելը զենք է, որից մեր թշնամիները այլայլվում են։ Ինչպես արդեն նշվեց, մենք հասել ենք մեր պատմության ամենաօրհասական ժամանակին՝ պետականության վերջնական կորստի ու մեր ցեղի ոչնչացման եզրին, և պետք է անենք ամեն ինչ, օգտագործենք ամեն անհրաժեշտ միջոց՝ մեր ազգին ոտքի հանելու ու հայրենիքը փրկելու համար՝ թքած ունենալով բոլոր նրանց կարծիքների վրա, ովքեր ուզում են Հայաստանը ոչնչացնել կամ ծնկի եկած պահել։

Մեզ համար մեր սերը մեր ազգի հանդեպ ամենաոգևորիչն է, սակայն հասկանում ենք, որ ատելու կարողությունը Արարիչը մեզ ինչ-որ իմաստի համար է տվել։ Սերն է մեզ համար շարժիչ ուժը և այս աշխարհում ամենակարևոր զգացումը, բայց առանց մահացու ատելության նրա հանդեպ, ինչը սպառնում է այն ամենին, ինչ մենք սիրում ենք, սերը իրոք դատարկ խոսք է և գրավիչ բառ վախկոտների համար։ Սակայն, չպետք է թույլ տանք, որ այդ ատելությունն ու զայրույթը մեզ կուրացնեն ու խորտակեն, այլ պիտի օգտագործենք որպես վառելիք՝ ճիշտ նպատակին հասնելու համար, ինչպես վառարանն օգտագործում ենք տունը տաքացնելու և ոչ՝ հրկիզելու համար։ Ինչքան էլ ծանր ու բարդ լինի մեր վիճակը, մենք պիտի դրական մտածենք և բոլոր բացասական դեպքերը դիտարկենք հնարավորինս դրական լույսի տակ։

Ամեն դեպքում մերժում ենք չարությունը՝ այն համարելով արարչաստեղծությունից ու բնությունից շեղված անբնական երևույթ: Ահավոր է, բայց փաստ, որ մեր ժամանակներում ոչ թե համատարած չարությունն է այդքան սարսափելի, այլ այն, որ մենք ոչ միայն հանդուրժում ենք չարությունը, այլև մեր միամտությամբ, կարճատեսությամբ ու վախկոտությամբ պաշտպանում ու նույնիսկ պաշտում ենք այդ նույն չարիքը: Որքան հանդուրժում, պաշտպանում և պաշտում ենք այդ չարիքը, մենք ինքներս ենք չարանում: Հետևաբար՝ ամեն գնով անարդարությունը ու չարությունը պիտի պատժվեն, քանի որ չպատժվելու դեպքում անարդարությունն ու չարիքը անգթորեն կշարունակվեն ու կտարածվեն՝ առանց դադարի: Սրանից հետևում է մեր բարոյական սկզբունքների ամենակարևորներից մեկը. մեր ատելի ու ոխերիմ թշնամիներին կարող ենք ներել միմիայն պատժելուց հետո:

«Հոսանք»-ի առաքելությունը ավելին է, քան միայն Հայաստանում նոր ցեղային գաղափարախոսության տարածումը կամ նոր արիական կրոնի քարոզը: Մեր առաքելությունը հայ ազգի մեջ խորը քնած արիական ոգու արթնացումն է, և Հայաստանում նոր, արիական սուրբ օրդենի հիմնավորումը, որը կլինի մեր պետության հոգևոր հենասյունը: Մեր պայքարը պիտի ծնի քուրմ ռազմիկների, ովքեր պատրաստ կլինեն պայքարելու և կյանքը նվիրաբերելու՝ հանուն վեհ գաղափարի:

Մեր բոլոր նախկին հերոսները հասկացել են անհերքելի ճշմարտություն, որ մենք ընդամենը հյուր ենք այս կյանքում: Հետևաբար, հերոսական ճանապարհով անցնելը առավելագույնն է, որին մարդ կարող է ձգտել այս կյանքում: Արարիչը պատմության իրադարձությունների միջոցով այս օրհասական ժամանակներում մեզ հնարավորություն է տալիս անցնել այդ հերոսական ճանապարհով, ու մենք դրա համար պետք է շնորհակալ լինենք: Ամեն մարդու կամ ազգին չի տրվում այդ պատիվը: Եթե խիզախություն ցուցաբերենք այդ հերոսական ճանապարհով անցնելու համար, որպեսզի փրկենք մեր պետականությունը ու քաղաքակրթությունը, ապա Արարչին կապացուցենք, որ արժանի ենք ապրել ու բազմանալ իր կողմից արարած աշխարհում: Մեզ ճանապարհը ցույց է տրվել, բայց մեզնից է կախված՝ կորոշենք անցնել այդ ճանապարհով, թե՝ ոչ: Մենք մեզ գիտակից մարդ համարելով՝ պետք է ընդունենք այդ ճանապարհով անցնելու պարտականությունը՝ հանուն մեր հերոս նախնիների և հանուն մեր ապագա սերունդների:

Մեր հեռահար մոտեցումն անհրաժեշտ է, բացարձակապես անհրաժեշտ և անխուսափելի: Մեր քաղաքական պայքարի համար կենսական նշանակություն ունի հոգևոր հիմք ունենալը: Այն կարճատես մոտեցումները, որոնք մեզնից առաջ տասնամյակներ շարունակ փորձել են մյուս հայրենասերները, ինչպես օրինակ, իշխանափոխություն անելը կամ կաշառակերություն վերացնելը, չեն կարող լուծել մեր առջև դրված հիմնարար խնդիրները: Դրանք չեն կարող մեզ վերադարձնել մեր հոգիները: Կարող է հեգնական թվալ, որ մենք պետք է պլանավորենք նվաճել ու հեղափոխել ոչ միայն մեր երկիրը, այլև՝ ամբողջ աշխարհը, որ մենք պետք է պլանավորենք այդ ամենը հանուն տիեզերական ճշմարտությունների և հավերժության, երբ մեզնից շատ ռեսուրսներ ունեցողները չեն կարողացել հաջողության հասնել շատ ավելի սահմանափակ նպատակների համար, ինչպիսիք են՝ դավաճաններին կառավարությունից հեռացնելը կամ աշխատավարձ բարձրացնելը, բայց պետք է ընդունենք, որ հենց այս սահմանափակ նպատակների համար աշխատողների պարզունակ մտածողությունն ու կարճատեսությունն են եղել նրանց ձախողման պատճառները: Հոգևոր հիմքի և գաղափարախոսության պակասն է պատճառը, որ մեր ժողովուրդը անընդհատ աջ ու ձախ

է քաշվում և մանիպուլյացիաների ենթարկվում, որովհետև, եթե ոչնչի չես հավատում, ապա ամեն ինչին էլ կհավատաս:

Մեր երկիրը իսկապես անկախ ու ինքնաբավ լինելու համար պետք է ունենա հզոր ու համապարփակ արդյունաբերություն ու ծաղկող գյուղատնտեսություն: Հետևաբար՝ մենք փոքր քայլերից սկսած պիտի այն մակարդակի հասցնենք մեր արդյունաբերությունը, որպեսզի բոլոր անհրաժեշտ իրերը որակյալ ձևով արտադրվեն Հայաստանում, և այն աստիճանի հասցնենք մեր գյուղատնտեսությունը, որպեսզի մենք մեր մշակած ու աճեցրած սնունդով կարողանանք մեր ազգաբնակչությանը հեշտությամբ կերակրել: Սա հարկավոր է բարգավաճ տնտեսություն ունենալու համար, որը հնարավորինս անկախ կլինի այլ երկրներից, օտար ներդրումներից ու այլ հանգամանքներից:

Այս գլոբալիզացիայի դարում, որտեղ բազմաթիվ երկրների արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը ու տնտեսությունները իրար շաղկապված են, քիչ երկրներ կան, որոնք կարող են իսկապես անկախ համարվել: Շատ քչերը կարող են առանց դրսի օգնության զարգանալ կամ նույնիսկ գոյատևել, ու դա պատճառ է դարձել, որ հատկապես փոքր երկրները կախված լինեն մեծ երկրներից, հատկապես՝ գերտերություններից: Դրա համար, երբ մի գերտերություն տնտեսական ճգնաժամ է ունենում, դա ազդում է մյուս բոլոր երկրների վրա: Մենք դեմ չենք գլոբալիզացիայի այն տեսակին, որ երկրները իրար միջև լավ հարաբերություններ հաստատեն ու առևտուր անեն, բայց այն գլոբալիզացիան, որն ունենք այսօր, միայն կարող է պետություններին կախվածության մեջ պահել և ոչնչացնել նրանց ինքնիշխանությունը:

Նման դրության մեջ լինելով՝ մեր ստեղծագործող ազգը վերածվել է ընդամենը առևտրական ժողովրդի, որը, մի որակյալ բան ստեղծելու փոխարեն, դրսից էժան ու անորակ ապրանքներ է ներմուծում ու վաճառում շուկաներում: Այսպիսով՝ մենք, ապրանքներ արտադրելու ու արտահանելու փոխարեն, միայն ներմուծում ենք՝ ներքին շուկայում ծախելու նպատակով: Սա մեզ ամբողջությամբ կախված է պահում դրսի հանգամանքներից: Նման մտածելակերպի պատճառով նույն մոտեցումը կա շինարարական ոլորտում, որտեղ մեր հայրենիքում, օրինակ, գործարաններ կառուցվելու փոխարեն, հիմնականում կառուցվում են ռեստորաններ ու հյուրանոցներ՝ Հայաստանը վերածելով ընդամենը տուրիստների համար երկրի:

Զարմանալի է, որ գրեթե ոչ մի քաղաքական կազմակերպություն կամ կուսակցություն չի խոսում այս հիմնարար ու կարևորագույն հարցի մասին: Գրեթե բոլոր քաղաքական վերլուծաբանների ու տնտեսագետների համար Հայաստանի տնտեսությունը զարգացնելու միակ ճանապարհը դրսից ներդրումներ ստանալն է ու զբոսաշրջության զարգացումը, որը ցանկացած ազգայնական հայի համար պիտի անհեթեթություն համարվի: Այո՛, դրսից ներդրումներն ու զբոսաշրջությունը, իհարկե, դրական բաներ են, բայց ինչպե՞ս կարող ենք մեր ողջ երկրի տնտեսությունը դրսի հանգամանքներից կախված պահել: Դա նշանակում է՝ եթե ողջ աշխարհը կործանվի ու մնա միայն Հայաստանը, մենք սովից կմեռնենք: Ներդրումներն ու զբոսաշրջությունը ցանկացած տնտեսության համար ընդամենը օժանդակող նշանակություն պիտի ունենան, ոչ թե ընկալվեն որպես այդ տնտեսությունը շարժող միակ գործոնները: Այս հարցը չբարձրաձայնելը համարում ենք հիմարության արդյունք կամ համակարգված դավադրություն՝ բոլոր նրանց կողմից, ովքեր ուզում են Հայաստանը տեսնել որպես ընդամենը լավաշի ու ծիրանի երկիր՝ հզոր արդյունաբերություն ունեցող երկրի փոխարեն:

Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն է ուժեղ արդյունաբերություն ունենալը: Հետևաբար՝ Հայաստանում պիտի արտադրվի որակյալ ամեն անհրաժեշտ իր՝ ամենափոքր շինարարական գործիքներից մինչև ամենամեծ տեխնիկական սարքերը: «Արտադրված է Հայաստանում» պիտակը պետք է համարժեք լինի, կամ նույնիսկ գերազանցի «արտադրված է Գերմանիայում» կամ «արտադրված է Ճապոնիայում» պիտակներին: Գերազանցությունը պիտի հայկականության հոմանիշ դառնա: Միայն այսպիսով կարող ենք հայաստանցիների և սփյուռքահայերի մեջ արմատավորել ու զարգացնել այն գիտակցությունը, որ Հայաստանը միայն զբոսաշրջության կամ ներդրում անելու երկիր չէ, այլ՝ ապրելու, աշխատելու, ստեղծագործելու ու սերունդ տալու երկիր:

Արդյունաբերությունը հզորացնելուն զուգահեռ՝ պետք է միանշանակ նաև ապահովենք մեր պարենային անվտանգությունը, և դա կարող ենք անել միայն այն պարագայում, երբ Հայաստանը կարողանա իր բնակչությանը ինքնուրույն կերակրել՝ առանց դրսից որևէ ուտելիք ներմուծելու անհրաժեշտության: Սա պահանջում է, որ մենք մեր գյուղատնտեսության մեջ հեղափոխություն անենք՝ շեշտը ավելի շատ դնելով բուսական հողագործության և ոչ՝ անասնապահության վրա: Համոզված ենք, որ այդ ոլորտում ճիշտ քայլեր անելով՝ մենք կկարողանանք նույնիսկ մեր ներկայիս տարածքով հեշտությամբ կերակրել մեր ողջ բնակչությանը՝ չունենալով սննդի պակաս: Անհեթեթություն է Հայաստանում արտադրված սննդի պակասությունը մեր երկրում, երբ հաշվի ենք առնում այն փաստը, որ ունենք բերրի հողեր ու առատ բնական ռեսուրսներ. դրախտավայրում չի կարող սով լինել, եթե գյուղատնտեսությունը ճիշտ ռելսերի վրա դրվի: Այս ամենը չի նշանակում, որ Հայաստան չեն ներկրվի տարբեր ապրանքներ և մթերքներ, դա ուղղակի նշանակում է, որ մենք մեր գոյատևման և բարգավաճման համար չպետք է կախված լինենք արտասահմանի ներկրումներից:

Գյուղատնտեսության մեջ մտցնելով նման արմատական փոփոխություններ՝ գյուղերի դատարկումը կկասեցվի, որովհետև գյուղացին աշխատանքի համար այլևս չի ուզենա ու կարիք չի ունենա քաղաք գնալու կամ տեղափոխվելու: Այսպիսով՝ գյուղերը իրենց գյուղացիների հետ կվերականգնեն իրենց արժանի համբավը՝ որպես ազգաբնակչությանը կերակրող ու սնուցողներ: Սա նշանակում է նաև, որ ինքնըստինքյան մեր հայրենիքում բնակչությունը կուտակված չի լինի միայն քաղաքներում կամ մայրաքաղաքում, ինչպես հիմա է: Ի տարբերություն ներկայիս «երևանակենտրոն» համակարգի, բնակչությունը ավելի հավասար կբաշխվի ու գյուղերը այլևս միայն ամառանոցներ ունենալու տեղ չեն համարվի: Մարդիկ նույնքան հեշտությամբ կկարողանան ապրել ու աշխատանք գտնել գյուղերում, որքան՝ քաղաքներում:

Այլևս ամոթանք չի համարվի հասարակության բարօրությանը նպաստող ցանկացած աշխատանք՝ անկախ նրանից՝ դա լինի աղբահավաք, թե՝ հավաքարար: Ամոթանք կզգան նրանք, որոնք ընդհանրապես չեն աշխատում:

Ցանկացած ազգային շարժում չի կարող իսկապես ազգային լինել, եթե նախ և առաջ ստեղծված չլինի հենց աշխատող ու աշխատասեր մարդկանց համար, քանի որ նրանց իրավունքները բոլորից շատ պետք է պաշտպանվեն: Հայրենասիրական քարոզներին զուգահեռ պետք է քարոզվի աշխատասիրությունը, քանի որ մեկը առանց մյուսի չի կարող լինել. իսկական հայրենասերը աշխատասեր է լինում և իսկական աշխատասերը՝ հայրենասեր: Սա հակասում է կոմունիստական ու կապիտալիստական ազգավեր գաղափարներին, որոնք վերջում ստրուկ են դարձնում աշխատասեր բանվորին ու գյուղացուն, և ծաղրի առարկա են դարձնում տաժանակիր ու ծանր աշխատանքները: Իսկ ցեղակրոնությունը մեզ ասում է, որ աշխատասիրությունը մարդկության բարձր

առաքինություններից մեկն է և հայրենիքի ու պետության օգտի համար ցանկացած աշխատանք կատարելը՝ մեծ պատիվ։

Առհասարակ անհեթեթություն ենք համարում նաև այն, որ այսքան շատ է գործազրկությունը մեր երկրում, որտեղ անթիվ աշխատանքներ կան անելու։ Երբ արդար բանկային ու ֆինանսական համակարգ հիմնադրենք և աշխատենք մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության վրա, ինքնըստինքյան կլուծվի նաև գործազրկության հարցը՝ աղքատությունը թողնելով մեր անցյալում։ Սա նշանակում է, որ մեր ազգաբնակչությունը լիովին նոր վերաբերմունք կունենա բանվորության ու հողագործության նկատմամբ, և կգիտակցի, որ հողը կարող ենք պահել միայն սիրելով, իսկ կարող ենք սիրել՝ միայն մշակելով։ Սա է «արյուն և հող» դավանանքի գլխավոր սկզբունքը։

Բոլոր քաղաքացիների մեջ կարմատավորենք այն մտածելակերպը, որ հայրենիքին ոչ միայն կարող ենք ծառայել զենքով, այլև բահով ու գերանդիով՝ անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն ունենան կամ որ դասակարգին պատկանեն։

Բանվորն ու գյուղացին միշտ կլինեն մեր հայրենիքի հենասյուններն ու մեր սահմանին կանգնած հայ զինվորի թիկունքը, հետևաբար՝ պետության պարտականությունն է՝ բանվորներին ու գյուղացիներին ապահովել ու նեցուկ լինել տարբեր հարցերում։ Այո՛, առանց գիտնականների՝ քաղաքակրթությունը առաջ չի գնա, և առանց արվեստագետների՝ հասարակությունը չի գեղեցկանա, բայց առանց բանվորների ու գյուղացիների՝ մարդկությունը ընդհանրապես գոյություն չի ունենա։

Սա կարևորագույն ճանապարհներից մեկն է, որի միջոցով ընդամենը դե յուրե անկախ լինելուց կարող ենք դե ֆակտո անկախ դառնալ։ Մեր գործարաններում աշխատող հայ բանվորի ամուր ձեռքով ու դաշտերում աշխատող հայ գյուղացու անկոտրում մեջքով պիտի դարձյալ դառնանք մեր ճակատագրի կերտողները։

Հենասյուն 8

Գիտություն և տեխնոլոգիա

Գիտության ու տեխնոլոգիայի զարգացումը Հայաստանի համար վիթխարի նշանակություն ունի այս ժամանակակից դարում և շատ հարկավոր է մեր ընդհանուր անվտանգության և բարգավաճման համար: Պիտի ստեղծենք լիովին նոր գիտություն, որպեսզի ոչ միայն կարողանանք մրցակցել ու առաջ ընկնել մեր հակառակորդներից ու թշնամիներից, այլև կարողանանք մեր ստեղծագործական ջիղն ու հանճարը մարդկությանը ցուցաբերել: Նպատակադրված ենք, որ Հայաստանը դառնա գիտության կենտրոնը այս մոլորակի վրա:

Ամենևին գաղտնիք չէ, որ գիտությունը Հայաստանում մահամերձ է, և չկա ուրիշ ոլորտ մեր երկրում, որ ավելի կրիտիկական վիճակում լինի, քան տեխնիկական ոլորտը: Գիտությունը այս սոսկալի վիճակին է հասել մեծ մասամբ մեր բոլոր ղեկավարների կարճատեսության, պարզամտության ու ագահության պատճառով: Սրան նաև նպաստել է երեսուն տարուց ավել արտագաղթը, որի արդյունքում մեր երկիրը դատարկվել է մտավորականներից, հատկապես՝ ճշգրիտ գիտությունների մասնագետներից: Գիտության մեջ նորարարական ոգին սպանել են, որպեսզի Հայաստանը գիտական ոլորտում լուրջ առաջընթաց չունենա: Սակայն, մենք գիտենք, որ հայ ազգը ունի այն ներուժը, որ միջազգային գիտական համայնքում լուրջ գործոն դառնա ու ունենա աշխարհահռչակ գիտնականներ: Միայն Հայաստանում ապրող ու աշխատող նվիրյալ գիտնականները կկարողանան մեր երկրում ստեղծել հզոր ռազմարդյունաբերություն, որը կգերազանցի մեր թշնամիների ռազմարդյունաբերությանը:

Մեր թշնամիների դեմ պայքարում քանակը մեր օգտին չէ, քանի որ երեք միլիոն բնակչություն ունեցող մեր արիական ազգը շրջապատված է հարյուր միլիոն հայատյաց թուրքերով: Գիտությունն ու տեխնոլոգիան այս հարցում կարող են լինել մեր ամենահզոր զենքը մեր թշնամիների դեմ, քանի որ գիտությունը կարող է հավասարակշռել իրավիճակը և մեզ նույնիսկ առավելություն տալ:

Սակայն, գիտությունը միայն ռազմական պատճառների համար չպետք է զարգացնենք: Մեզ համար նույնքան կարևոր է նոր էներգիա ստանալու հեղափոխական միջոցներ հայտնագործելը, որպեսզի նավթի անհրաժեշտությունն ու կախվածությունը դադարի՝ մեծ վնաս հասցնելով մեր թշնամի հարևաններին, որոնց ողջ տնտեսությունը կախված է նավթի ու գազի վաճառքից: Էներգիա ստանալու նոր ու բնության օրենքներին համահունչ տեխնոլոգիաները ճնշված են մնացել տասնամյակներով նավթի կորպորացիաների և նման այլ տխրահռչակ ուժերի կողմից, քանի որ նման տեխնոլոգիաների զարգացումը մարդկությանը կազատեր ստրկության մեջ պահող շղթաներից:

Աշխարհին սպասվում է մեծ էներգետիկ ճգնաժամ, և մենք չպետք է այս հին տեխնոլոգիաները ձեռք բերելու հետևից ընկնենք, որովհետև այդպես ոչ մի տեղ չենք հասնի: Եթե թռիչքաձև աճ ենք ուզում արձանագրել, մենք՝ հայերս, պետք է հասկանանք լիովին նոր գիտություն ստեղծելու անհրաժեշտությունը: Նոր սկզբունքների վրա հիմնված գիտություն ստեղծելու համար մեծ շեշտ պետք է դրվի ոչ միայն փորձարարական ֆիզիկայի, այլև՝ տեսական ֆիզիկայի վրա, որը ոչ մի առաջընթաց չի ապրել վերջին հարյուր տարում՝ հիմնականում իրենց «տեսական ֆիզիկոս» համարող սպեկուլյանտների պատճառով:

Ինչպես հազարամյակներ առաջ մեր նախնիները հայտնաբերեցին երկաթը, ստեղծեցին անիվը ու մարտակառքը՝ այդ ժամանակվա հրասայլը, և այդ սրամտության շնորհիվ առաջ անցան մյուս բոլոր ազգերից, այնպես էլ մենք այս ժամանակակից դարում պիտի ստեղծենք լիովին նոր սկզբունքներով աշխատող էներգիա ստանալու տեխնոլոգիա և տեխնիկական զենքեր, եթե ցանկանում ենք այս տեխնոլոգիական մրցման մեջ առաջ անցնել բոլորից և մեր արժանի տեղը զբաղեցնել աշխարհաքաղաքական բեմի վրա:

Հետևաբար՝ պետությունը պարտականություն ունի գիտության և տեխնոլոգիայի կարևորությունը ամենուրեք շեշտելու, և ամենափոքր տարիքից երիտասարդներին խրախուսելու, որ գիտնական դառնան: Համալսարաններում բացի անվճար ուսում տալուց՝ պետությունը պարտադիր պիտի դրամաշնորհներ տա և ֆինանսապես ապահովի երիտասարդ գիտնականներին, հատկապես՝ ֆիզիկոսներին, քիմիկոսներին, ճարտարագետներին, և նման այլ մասնագետներին, որոնք հայրենիքի համար լուրջ գիտնական դառնալու ճանապարհին են: Չպետք է թույլ տանք, որ օտար ուժերը մեզ փորձեն շեղել այն գիտությունից, որը կարող է իրոք օգուտ բերել մեր երկրին: Չպետք է թույլ տանք, որ մեր երիտասարդ գիտնականներին շահագործեն իրենց անաստված տեխնոկրատական օրակարգը առաջ տանելու համար: Այս հարցով կզբաղվի առանձին ու հատուկ նախարարությունը՝ միայն գիտությանը և տեխնոլոգիային նվիրված, և այն ուրիշ նախարարությունների կցորդը չենք դարձնի:

Տեխնոլոգիան մարդկությանը ազատելու և առաջընթաց տալու համար կլինի, և մեր բարոյական զարգացումը երբեք չի տուժի տեխնոլոգիայի զարգացման պատճառով, ինչպես տեսնում ենք այս ժամանակակից աշխարհում, որտեղ սիոնիզմին ծառայող միլիարդատեր տեխնոկրատները տեխնոլոգիան օգտագործում են որպես չարիք՝ մարդկությանը ստրկացնելու նպատակով: Այս ամենը չենք կարող անտեսել, եթե ուզում ենք ձգտել աստղերին՝ փոխաբերական և բառիս բուն իմաստով: Մենք պարտավոր ենք բացահայտել տիեզերքի գաղտնիքները:

Մենք պետք է ամեն ինչով ապահովենք և աջակցենք գիտնականներին, որպեսզի գիտնականների թիվը հայրենիքում շարունակի աճել, և արտագաղթի միտքն այլևս չանցնի նրանց մտքով: Չպետք է թույլ տանք, որ գիտությունը թաղվի մեր երկրում, քանի որ այդ դեպքում մեր ապագա զարգացման բոլոր հնարավորություններն էլ կթաղվեն: Գիտությունը Հայաստանում կծաղկի՝ իր հետ լույս բերելով մթության մեջ սուզված ողջ քաղաքակրթությանը, և աշխարհը կրկին ականատես կլինի հայի գիտական մտքի հանճարին:

Հենասյուն 9

Կրթություն և մեդիա

Կրթությունն ու մեդիան պիտի ունենան մեր ազգաբնակչությանը ոչ միայն կրթելու ու ճշմարտությունը հասցնելու պարտականությունը, այլև պիտի ունենան դաստիարակչական գլխավոր դեր: Եթե ուզում ենք լիովին նոր ազգայնական սերունդ կրթել ու դաստիարակել, պիտի ազգային պետության կողմից վերահսկվեն մեդիան ու կրթական համակարգը, որոնք հիմնված կլինեն բացառապես ազգային գաղափարների վրա, և կարգելվեն բոլոր ուղղակի ու անուղղակի քարոզչությունները, որոնք վնասակար են մեր ազգին, հատկապես երիտասարդությանը, իսկ ազգի առաջընթացին աջակցող բոլոր քարոզչությունները կխրախուսվեն:

Մեր ապագա ազգային պետությունը չպետք է թույլ տա կրթության նվաստացումն ու ապազգայնացումը, և բացի երկրի մեդիան վերահսկելուց՝ պետք է նաև վահան լինի միջազգային սիոնիստական մեդիայի դեմ, որը պղտորում է մարդկանց մտքերը ու կոռումպացնում նրանց հոգիները: Այս կոռումպացվածությունը տարեցտարի ավելի է ակնհայտ դառնում, և դրան զուգահեռ ավելի ակնբախ է դառնում մեր երիտասարդության դեգրադացումը: Տեսնելով ներկա կրթության համակարգի անամոթ վիճակը ու մեդիայում ներկայացված տհաճ ու ապազգային քարոզչությունները՝ այս փաստերը չպետք է զարմանք առաջացնեն մեր մեջ: Կրթությունը և հատկապես մեդիան, հզոր զենքեր կարող են լինել ազգին կա՛մ ստորացնելու, կա՛մ հոգեպես գոտեպնդելու ու դաստիարակելու համար: Ցավոք, մենք տեսնում ենք, որ մեր պարագայում առաջինն է, բայց մենք այդպիսի վիճակում չենք թողնի:

Մենք կարծում ենք՝ դպրոցները շատ մեծ ներուժ ունեն ուսանողներին ճիշտ կրթելու համար, որը չի օգտագործվում: Կարծում ենք, որ ուսանողները շատ բաներ են սովորում, որոնք իրական կյանքում չեն կիրառում և միայն սովորում են ինչ-որ փաստեր հիշել՝ այդ փաստերի հետևում կանգնած դասերը սովորելու փոխարեն: Պատմությունից դասեր քաղել սովորելը կարևոր է, որպեսզի մեր սերունդները ապագայում մեր նախնիների պատմական սխալները չկրկնեն: Պատմությունը ազգի կենսագրությունն է, և առանց դրա՝ մենք չունենք անցյալ, որի արդյունքում չենք կարող ունենալ ապագա: Հետևաբար՝ հայոց պատմությունը, հայոց լեզուն և հայագիտությունը առանցքային առարկաներ կլինեն մեր կրթական համակարգի բոլոր փուլերում: Հարկավոր է հայագիտության տարածումը, որպեսզի հակազդվի Հայաստանի պատմության կեղծումը մեր թշնամիների կողմից: Այդ կեղծումը ունի մեկ նպատակ. մեզ ֆիզիկապես բնաջնջելուց առաջ նախ բնաջնջել պատմության էջերից: Հայագիտությանը ջերմեռանդորեն սատարելուն զուգահեռ՝ հնէաբանության վրա էլ մեծ շեշտ կդրվի, որովհետև մեր ներքին ձայնը մեզ հուշում է, որ դեռ շատ գաղտնիքներ կան մեր լեռնաշխարհում, որոնք պետք է բացահայտվեն: Եթե մեր հայրենակիցները ուզում են լավ հասկանան մարդկության պատմությունը, պետք է նախ և առաջ լավ հասկանան մեր հայոց պատմությունը, քանի որ հայոց պատմությունը կապված է համաշխարհային քաղաքակրթական պատմության հետ:

Վճռական ու պատասխանատու մարդ մեծացնելու համար դպրոցները կսովորեցնեն ողջ մնալու արվեստ, որտեղ ծայրահեղ պայմանների համար կսովորեն տարբեր տեսակ գործիքներ օգտագործել ու կիրառել, և թե ինչպես գոյատևել բնության մեջ սակավաթիվ ռեսուրսներով: Դրան գումարած՝ կսովորեն ռազմագիտություն, մարտարվեստ, ծանրամարտ և նման այլ կարևոր առարկաներ, որոնք փոքրուց պիտի

ներարկվեն մեր երեխաների մեջ։ Կարճ ասած՝ դպրոցները ոչ միայն պիտի գիտելիքներ փոխանցեն ուսանողներին, այլև մտածել սովորեցնեն և յուրաքանչյուր ուսանողի կերպարը կերտեն՝ նրան դարձնելով արժանապատիվ հայորդի։ Դպրոցները նաև կկազմակերպեն արշավներ, որպեսզի տարվա մեջ մի քանի անգամ ուսանողներին տանեն Հայաստանի տարբեր անկյունները՝ իրենց հայրենիքին ծանոթացնելու համար։

Մանկապարտեզից սկսած՝ երեխաները պիտի սովորեն ազգային գաղափարախոսություն, որպեսզի հանուն հայրենիքի՝ դառնան պետականամետ ու արդյունավետ քաղաքացի։ Ամեն մի ազգ արժանի է այն կառավարությանը, որն ունի, դրա համար մենք այնպիսի ազգ պիտի դաստիարակենք, որը արժանի կլինի լավ ու պատվաբեր կառավարությանը։ Այս ամենին սատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի հայկական սոցիալական մեդիայի հարթակ ստեղծել պետության կողմից։

Բարձրագույն կրթություն ստանալն էլ անվճար կլինի, ինչպես արդեն նշվել է, բայց այդ համալսարաններում, ինչպես նաև ողջ կրթական համակարգում, պետք է ուսանողները դաստիարակվեն ու ոգևորվեն այն գաղափարով, որ այն ամենը, ինչ սովորում են, ոչ միայն աշխատանք ձեռք բերելու ու գումար վաստակելու համար է, այլև՝ այդ ստացած գիտելիքով մեր ազգին օգտակար դառնալու, քանի որ մարդկության մեջ բոլոր մեծ հայտնագործությունները ու սխրանքները արվել են ոչ թե գումարի համար, այլ այն նպատակով, որ աշխարհը ավելի կատարյալ տեղ դառնա։ Ուսանողների համար ավելի դրական մթնոլորտ ստեղծելու ու ստեղծագործական միտքը խթանելու համար այսուհետ դպրոցները ու համալսարանները պիտի կառուցվեն կամպուսների նման, ինչպես տեսնում ենք Եվրոպայում ու ԱՄՆ-ում։

Սրա հետ միաժամանակ պիտի ազգային պետական մեդիա ունենանք, որը ոչ թե կհակասի, այլ կլրացնի դպրոցներում սովորացրածը։ Կրթությունն ու մեդիան իրար հետ շաղկապված են, ու հնարավոր չէ իրարից տարանջատել։ Չենք կարող լավ կրթական համակարգ ունենալ՝ առանց լավ մեդիա ունենալու, և՝ հակառակը։ Մեր ժամանակակից դարում քարոզչություն բառը վատ երանգ է ստացել ու բացասական տպավորություն է թողնում մարդկանց վրա, և սա հասկանալի է, որովհետև ներկա քարոզչությունների մեծ մասը մարդկանց փչացնում ու տներ է քանդում։ Սակայն, ինչպես արդեն նշեցինք, մեդիայի քարոզչությունը զենք է, որը կարող ենք դրական ուղղությամբ օգտագործել, եթե ճիշտ մարդիկ բռնեն այդ զենքը։ Առանց որևէ կասկածի, ազգային մեդիան հզոր զենք կարող է լինել ճշմարիտ քարոզչությամբ ազգին դաստիարակելու համար։ Դա անհրաժեշտ է, որովհետև, եթե ազգային պետությունը չդաստիարակի իր քաղաքացիներին, նրանց ուղեղները կլվացվեն թշնամական կեղծ քարոզչությամբ։ Մենք դրա օրինակը տեսնում ենք հիմա մեր հայրենիքում, երբ ոչ մի ազգային դաստիարակություն չունենալու արդյունքում ամենուրեք տեսնում ենք ուղեղները լվացված անձանց։ Դրա համար պիտի հեռուստատեսությունում, ռադիոյում ու համացանցում արգելվեն այն երաժշտությունը, սերիալներն ու ֆիլմերը, որոնք դեգրադացնում են մեր երիտասարդությանը։

Քարոզչությունը մեծ գործիք կարող է լինել ազգի դեգրադացումը կասեցնելու համար, որը չենք կարող անտեսել այս ժամանակակից տեխնոլոգիական դարում, որտեղ չափազանց մեծացել է փափկամորթների ու անողնաշար մարդկանց թիվը։ Մենք գիտենք, որ դժվար ժամանակները ստեղծում են ուժեղ մարդկանց, որոնք ստեղծում են լավ ժամանակներ, սակայն պետությունը, իր քաղաքացիներին շարունակաբար կրթելով ու դաստիարակելով, պիտի ազգի իմունային համակարգը հզոր պահի, որպեսզի այդ լավ ժամանակների հարմարավետության ճահիճը չստեղծի թույլ մարդկանց, որոնք նորից կստեղծեն դժվար ժամանակներ։

Այդ դաստիարակչական հարցում մեծ դեր կկատարի նաև դպրոցներում համազգեստների պարտադիր կրումը, որը պիտի վերականգնվի: Ողջ կրթական համակարգում և մեդիայում ամեն հայորդի պիտի խորապես գիտակցի, որ չկա ազատություն՝ առանց դաստիարակության, ինչպես չկան իրավունքներ՝ առանց պարտականությունների: Որքան դաստիարակված լինի հասարակությունը, այնքան ավելի ազատություն կունենան այդ հասարակության մեջ գտնվող քաղաքացիները: Նմանապես, նոր ստացած իրավունքները կառաջացնի նոր պարտականություններ կատարելու պահանջը, որը կատարելու դեպքում իր հետ կբերի նոր իրավունքներ: Մարդու ու հասարակության ազատությունը իմաստավորված կլինի, եթե զուգակցվի պատասխանատվության ու պարտականության հետ: Ոչ մի լավ բան այս հավերժ պայքար ունեցող աշխարհում հեշտ չի տրվում, դրա համար նաև չի կարող լինել փառք՝ առանց զոհաբերության՝ հանուն գերնպատակի: Սա այն կարևոր դասերից է, որը տղամարդը պետք է սովորի, եթե ցանկանում է «կիսամարդուց» դառնալ գերմարդ և ավելին:

Գիտակցում ենք, թե որքան է հասարակության կանացիացումը վնասել առնականությանը մեր քաղաքակրթության մեջ և թուլամորթ դարձրել բազմաթիվ տղամարդկանց, որոնք պիտի մեր ազգի առաջնորդներն ու պաշտպանները լինեն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ փափուկ կյանքի և վատ ապրելակերպի պատճառով վերջին հիսուն տարում տեստոստերոնը իջել է տղամարդկանց մեջ, որը բացասաբար ազդում է առնականության վրա, և որտեղ պակասում է առնականությունը, կպակասի նաև տղամարդկությունը: Մեր թշնամիները լավ գիտեն, որ, եթե տղամարդկանց «ամորձատելով» թուլացնեն առնականությունը, ապա հասարակությանը շատ ավելի հեշտ կլինի կառավարել ու վերահսկել, քանի որ այլևս դիմադրություն չի լինի իրենց սատանայական ծրագրերին: Հասարակության մեջ առնականության հոգին կարող ենք վերականգնել այն դեպքում, երբ ազգային պետությունը ստանձնի ազգի հոր դերը՝ իր բոլոր քաղաքացիներին փորձելով դարձնել հնարավորինս անկախ ու ինքնաբավ բոլոր առումներով, և ոչ թե՝ ամեն փոքր հարցում պետությունից կախված: Քաղաքացիները կդաստիարակվեն՝ իմանալով, որ բարձր արժեքներ կրող մարդը պարտականություններ է դնում իր վրա՝ իր իրավունքների շուրջ վիճելու փոխարեն: Նման մտածելակերպով մարդը կհետապնդի վեհությունը և ոչ՝ ուրախությունը, քանի որ վեհության հետապնդումն է կերտում ազդեցիկ կյանք ու բերում երկարատև ուրախություն:

Ահա այդպես կրթությունը ու մեդիան, իրար հետ նույն վեհ նպատակին ծառայեցնելով, կարող ենք մեր հայրենակիցներին ճշմարտությունը հասցնել, արժանապատիվ քաղաքացի դաստիարակել, և ամենակարևորը՝ նրանց հոգիները սնուցել ու բարձր իմաստ տալ նրանց կյանքին:

Հենասյուն 10

Մշակույթ

Մշակույթը ազգի ինքնությունն է, ազգի ներքին հոգևոր աշխարհի արտապատկերումը, որը պետք է պահպանենք և պաշտպանենք ամեն տեսակ ապազգային դեգրադացումներից: Մշակույթի մակարդակն էլ հասարակության մակարդակի օբյեկտիվ ցուցիչն է: Հետևաբար՝ մեր շարժումը կնախաձեռնի շատ կարևոր գործողություն. հայկական մշակույթը՝ լեզուն, արվեստը, գրականությունը, երգը, պարը և ճարտարապետությունը մաքրել բոլոր օտար, գարշելի ազդեցություններից: Միայն մեր մշակույթը ազգայնացնելով ու գեղեցկացնելով՝ կարող ենք սրբության պես այն հարգել, սիրել և արժևորել:

Մեր և առհասարակ բոլոր արիական ազգերի մշակույթները միջազգային սիոնիստական մեդիայի ուժեղ հարվածի տակ են եղել առնվազն վերջին հարյուր տարում: Լեզուն վարկաբեկվել է «գողական» կիսամարդ ժարգոնով, արվեստը պղծվել է, այսպես կոչված, «ժամանակակից արվեստով», գրականությունը այլանդակվել է աղբ գրականությամբ, երգ ու պարը դեգրադացվել են ռեփ ու հիփ-հոփ ջունգլիական երաժշտությամբ ու շարժումներով, ճարտարապետությունն էլ վերածվել է տգեղ ու դժգույն ոլորտի, որտեղ գեղեցիկ ու տպավորիչ կառույցներ ու քաղաքներ կառուցվելու փոխարեն՝ կառուցվում են բանտերին նմանվող ասֆալտային ջունգլիներ: Այս ամենը ցուցիչներ են, որ մեր ներքին աշխարհը մեր թշնամիների կողմից նենգաբար աղավաղվել է, որի արդյունքում աղավաղված արտապատկերում ունենք: Դրա համար մենք պարտավոր ենք նման տարրերից մաքրել մեր մշակույթը, որպեսզի մեր երեխաները նման գարշանք չժառանգեն, որովհետև առանց դա անելու՝ մենք չենք կարող կասեցնել մեր հասարակության դեգրադացումը:

Այս պղծված մշակույթը, ըստ էության, ապազգային է ու հակաարիական, որի նպատակն է մեր հասարակության մեջ ոչնչացնել գեղեցկությունը բոլոր ոլորտներում: Մենք նպատակադրված ենք այս գեղեցկությունը պահպանել՝ պաշտպանելով հայապահպանության համար ամենամեծ դերն ունեցող մեր վեհ մշակույթը, որից բխում է մեր աստվածային լեզուն, հրաշալի արվեստը, հիանալի գիրն ու գրականությունը, գեղեցիկ երգն ու պարը և ազդեցիկ ճարտարապետությունը: Մեր կյանքը գեղեցկացնելու համար պետք է նախ գեղեցկացնենք մեզ շրջապատող մշակութային աշխարհը: Սա անելու համար պետք է ընդհանրապես արգելվեն բոլոր տեսակ այլասերված ֆիլմերը, երգերը, գրականությունը, պարերը, սերիալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն քարոզում են ֆեմինիզմ, համասեռամոլություն, պոռնոգրաֆիա, «գողական» ենթամշակույթ և նման այլ թույներ, որոնք սպառնում են մեր հայկական մշակույթին: Մեր մշակույթի այլասերումը նաև շատ լավ արտահայտվում է մեր ներկա սերնդի հագուստի ոճով, որը սարսափելի վատթարացել է, և օրստօրե ավելի է վատթարանում: Կփակվեն նաև գիշերային ակումբները ու խաղատները, քանի որ առողջ ու գիտակից ժողովուրդը կգարշի նման բաներից և այլևս չի հանդուրժի: Դրանց բոլորի փոխարեն՝ պիտի տարածվի շատ ավելի վեհ մշակույթ, որը իրոք կխոսի մեր սրտերի ու հոգիների հետ:

Մեծ շեշտ պետք է դրվի մեր լեզուն օտար բառերից ու «գողական» ժարգոնից մաքրելու վրա. հայը այլևս փնթի վերաբերմունք չպետք է ունենա իր սուրբ լեզվի նկատմամբ: Ճարտարապետությունն էլ լիովին կհեղափոխվի, և այլևս չեն լինի Սովետից ժառանգած այն հրեշային բարձրահարկ բանտախուցերը, որ գարշանք են առաջացնում

ամեն անգամ նայելիս։ Ամեն մի ճարտարապետական նախաձեռնություն կունենա հստակ նախագիծ, որի վրա կաշխատեն մեր ազգի լավագույն արվեստագետներն ու ճարտարապետները։ Ճանապարհները, շենքերը և մյուս բոլոր շինությունները այնպես կկառուցվեն, որ տասնամյակներ ու նույնիսկ հարյուրամյակներ դիմանան, և ոչ թե փտեն մի քանի տարում, ինչպես հիմա է դիտմամբ արվում, որպեսզի շահեն ագահ կապիտալիստները։

Մեր մշակույթը կմաքրենք օտարամոլությունից, որը կարծես թե հիվանդագին աստիճանի է հասել, բայց սա, իհարկե, չի նշանակում, որ մեր մշակույթում միայն հայկական տարրեր կլինեն։ Չենք մերժի այլ արիական ազգերի մշակույթի տարբեր մասերը և գաղափարները, եթե համահունչ են մեր հայկական մշակութային իդեալներին։ Ամեն դեպքում օտարներից օրինակներ վերցնելը ու դասեր քաղելը չպետք է խառնենք օտարամոլության հետ։

Ընդհանուր առմամբ արիական մշակույթը վեհ է մյուս բոլոր մշակույթներից, և մենք՝ հայերս՝ որպես այդ վեհ արիական մշակույթի առաջապահ ազգ ու արիական քաղաքակրթության բնօրրանի բնակիչներ, մյուս բոլոր արիական ազգերից ավելի մեծ պարտականություն ունենք այլասերումից պաշտպանելու մեր արարչաստեղծ մշակույթը, որը հազարավոր տարիներ մեր նախնիների զոհաբերությունների շնորհիվ հասել է մեզ և իր ազդեցությունը թողել բազմաթիվ քաղաքակրթությունների վրա։

Հենապյուն 11

Առողջապահություն և բնապահպանություն

Առողջ ազգ չենք կարող ունենալ, եթե, բնականաբար, չունենանք առողջ ազգակիցներ, հետևաբար, անվճար բժշկություն տրամադրելուց բացի, պետք է հեղափոխվի մեր առողջապահական համակարգը՝ բժշկությամբ զբաղվող մասնագետների համար պարտադիր դարձնելով բնական բուժումներ ուսումնասիրելը: Կրթական համակարգն ու ազգային պետական մեդիան պարտավոր կլինեն սովորեցնելու ու քարոզելու առողջ ապրելակերպ, մասնավորապես՝ ճիշտ սնվելու ու մարզվելու կարևորությունը, որպեսզի հիվանդությունները կանխվեն, և նույնիսկ բուժվեն եղած հիվանդությունները: Պետությունը նաև հարկային արտոնություններ կտրամադրի բուսական առողջ սննդի արտադրության համար, որպեսզի այն մատչելի լինի բոլորին: Մենք չենք կարող գեղեցիկ ու կանաչապատ երկիր ունենալ, եթե հնարավորինս չբուժենք բնությանը մեր հասցրած վնասները՝ բնության ու կենդանական աշխարհի հանդեպ մեր ողջ մոտեցումը վերափոխելով: Սա նաև նշանակում է, որ անհապաղ կկասեցվի հանքերի շահագործումը, հատկապես, եթե դա շահույթ է բերում օլիգարխներին ու օտարերկրյա ընկերություններին: Իրավունք չունենք անհարգալից վերաբերմունք դրսևորել բնության և կենդանական աշխարհի հանդեպ՝ անփութորեն և տգիտաբար պղծելով այն, քանի որ բնությունը Արարչի տաճարն է, որի անբաժան մասն ենք մենք բոլորս:

Ըստ բժշկական վիճակագրությունների՝ ամեն տարի մեր բնակչության (նաև ողջ աշխարհի) մեծամասնությունը մահանում է սիրտ-անոթային հիվանդություններից, աղիքների քաղցկեղից, շաքարախտից, երիկամի հիվանդություններից, կաթվածներից և նման այլ սարսափելի ախտերից, որոնք առաջանում են հիմնականում վատ սննդակարգից ու ապրելակերպից: Սա ապշեցուցիչ վիճակագրություն է, որովհետև պարզվում է, որ մեր հայրենակիցների կեսից ավելին ամեն տարի մահանում է՝ չապրելով իր կյանքի պոտենցիալի կեսն անգամ: Մեր բժիշկների մեծ մասը լավ կարողանում են հիվանդությունները ախտորոշել ու վիրահատություններ անել, բայց, ցավոք, գրեթե ոչինչ չգիտեն առողջ սննդի ու առողջ ապրելակերպի մասին: Այս երևույթը ողջ քաղաքակիրթ աշխարհում է հայտնի, քանի որ ագահ ու չար դեղագործական արդյունաբերությունը մեծ գումարներով կոռումպացրել է բժշկական համալսարաններին և առհասարակ բժշկությանը՝ բժիշկներին սովորեցնելով ընդամենը դեղեր նշանակել հիվանդությունների համար: Սակայն, ինչպես գիտենք, դեղ նշանակելը միայն թաքցնում է ախտանիշը և չի բուժում բուն հիվանդությունը: Ներկայիս բժշկությունը նույնիսկ դիտմամբ թաքցնում է տարբեր հիվանդությունների ու քաղցկեղների բնական բուժումները, ինչպես, օրինակ, երկար ծոմ պահելը և հում բուսակերությունը, որովհետև նրանք չեն կարող գումար աշխատել նման բուժումներից:

Միայն առողջ սննդով, առողջ ապրելակերպով ու որոշ բնական բուժումներով մենք կարող ենք այդ հիվանդությունները բուժել. այստեղ տեղին է մեջբերել ժամանակակից բժշկության հայր Հիպոկրատի խոսքերը՝ «թող քո սնունդը լինի քո դեղը»: Իսկ այն ծայրահեղ վիճակում գտնվող հիվանդների կամ հաշմանդամ մարդկանց նկատմամբ, որոնք տառապում են և հնարավոր չէ բուժել նրանց, կկիրառվեն էֆթանազիայի սկզբունքները՝ նրանց թույլտվությամբ իրենց զրկել կյանքից:

Այս մահերի քանակը կարող ենք մեր կյանքի մեջ փոքր, բայց արմատական փոփոխություններ մտցնելով՝ կանխել և գրեթե ամբողջությամբ արմատախիլ անել, քանի

որ վստահաբար պնդում ենք, որ այս հիվանդությունները բնական չեն: Բժիշկները պարտավոր կլինեն սովորել, թե ինչ է իրականում առողջությունը: Դպրոցներում կսովորեն առողջ սնվելու կարևորությունը՝ հեռու մնալով ծխախոտներից, ոգելից խմիչքներից, թմրանյութերից և վնասակար սննդից: Պետք է քարոզչական արշավներ նախաձեռնվեն այդ մոլությունների և առողջությունը փչացնող այլ վնասակար սովորությունների դեմ, որովհետև առողջ ազգը պիտի բաղկացած լինի առողջ անհատներից:

Վերականգնողական կենտրոններ ամենուրեք կբացվեն թմրամոլներին և այլ մոլություններ ունեցողներին բուժելու համար՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով նույնիսկ բնական հոգեմետ բույսեր: Մեդիայում ամենուրեք կքարոզվի առողջ ապրելակերպը՝ ոգևորելով բոլորին որդեգրել այդ ապրելակերպը: Ռեստորաններին կպարտադրվի առողջ բուսական սննդի մենյու էլ ունենալ, և մթերային խանութներին կպարտադրվի ունենալ բուսական սննդի ավելի մեծ տեսականի: Առողջապահության նախարարությունն էլ հատուկ մարմին կունենա, որը կվերահսկի ռեստորաններում և մթերային խանութներում սննդի որակը:

Կքարոզվի և դպրոցներում կսովորեցնեն ծանրամարտը, մարտարվեստը, մարմնամարզությունը, վազքը, արշավները, յոգան, մեդիտացիան և նման այլ առողջ զբաղմունքներ: Պետությունը կստեղծի մարզասրահների ու մարտակումբների ցանց, որը բազմաթիվ կետեր կունենա Հայաստանի տարբեր մասերում, որոնց անդամավճարը շատ մատչելի ու հասանելի կլինի բոլորին: Առողջությունը ավելին է, քան հիվանդություններից զերծ մնալը, այն մարմնի միջոցով հոգով ու մտքով առողջ մնալն է, որը ընդհանուր առմամբ կնպաստի մեր ազգի բարեկեցությանը:

Բնության մեջ ու փողոցներում քայլելիս պարզ երևում է, թե որքան անտարբեր է դարձել մեր բնակչությունը իր բնության հանդեպ: Գրեթե մի անկյուն չկա մեր երկրում, որը աղտոտված չի լինի, և մենք չենք կարող մեզ հայրենասեր համարել, եթե չլուծենք այս խնդիրը: Անաղարտ հայրենիք ունենալու համար պետք է փոխվի մեր ընդհանուր վերաբերմունքը՝ բնության ու կենդանական աշխարհի նկատմամբ: Բնապահպանական հայացքներ որդեգրելով՝ մենք հնարավորինս անաղարտ կպահենք մեր հայրենիքի բնաշխարհն ու էկոհամակարգը: Նման հայացքներ կարող ենք ներարկել մանկապարտեզից սկսած՝ կրկին մեդիայի քարոզչության շնորհիվ: Պիտի խստիվ տուգանվեն աղբ թափողները և ծայրահեղ դեպքերում նաև խստիվ դատվեն: Սրան զուգահեռ կկառուցվեն վերամշակման մեծ կենտրոններ քաղաքներում ու գյուղերում, որպեսզի նվազեցնենք բնությանը մեր հասցրած վնասը: Բնության տարածքում ցանկացած զգալի փոփոխություն կատարելու համար կպահանջվի հաստատում ու թույլտվություն բնության պահպանության կենտրոնական մարմնից:

Գյուղատնտեսությունն էլ կամաց-կամաց բուսակերական հիմքերի վրա դնելով՝ զգալիորեն կնվազեցնենք անտառահատումները, և ջրի ու օդի պղտորումը, որը կփրկի բազմաթիվ էկոհամակարգեր՝ խթանելով կենսաբազմազանությունը: Գիտական փաստերը մեզ ապացուցել են, որ բնությանը վնաս հասցնող ամենամեծ գործոնը անասնապահությունն է, քանի որ կարևոր ռեսուրսների անիմաստ վատնում է այն պատճառի համար, որ գյուղատնտեսության համար նախատեսված հողատարածքի մեծ մասը օգտագործվում է կենդանիներին կեր աճեցնելու և ոչ թե ուղիղ մարդկանց կերակրելու համար: Բուսակերությունը ոչ միայն չափազանց նպաստում է բնությանը, այլև սկզբունքորեն ավելի էթիկական է ու նաև շատ ավելի առողջարար:

Բնության նկատմամբ դրական վերաբերմունք ունենալը անհնար կլինի, եթե չունենանք դրական վերաբերմունք բնության մեջ ապրող կենդանիների հանդեպ, որը հենց

այդ բնության հոգին է: Մարդկության դաժանությունը կենդանիների հանդեպ վաղուցվանից է հայտնի, ու ամենևին նորություն չէ, բայց մենք, այնուամենայնիվ, խստիվ դատապարտում ենք կենդանիների հանդեպ գործած դաժանությունները, և օրենքի ողջ խստությամբ կդատվեն այն մարդիկ, որոնք կենդանիների հանդեպ դաժանություններ կգործեն: Կարգելենք կենդանական ծիսակարգային զոհաբերությունները, որոնց մեջ մտնում են մատաղները: Կարգելվեն նաև կենդանիների վրա վայրագ ու վնասակար փորձարկումները: Կարճ ասած՝ կենդանիներին դաժանություններից պաշտպանելու համար օրենքներ կստեղծվեն և կվերահսկվեն, քանի որ նման դաժանությունները հակասում են մեր բարոյականությանն ու էությանը: Մեր երեխաները ամենափոքրուց կսովորեն հարգել ու սիրել բոլոր կենդանիներին, որովհետև կենդանիներն էլ են Արարչի էակներ, ովքեր մեզ հետ կիսում են մեր հրաշալի բնական աշխարհը:

Զգտում ենք ավելի մաքուր, ավելի կանաչ աշխարհ տեսնել, սակայն չպետք է տարվենք «կանացի» այլասիրությամբ՝ անտրամաբանական կարեկցանք ցուցաբերելով՝ ի վնաս մեր ցեղի: Ջատագովն ենք «առնական» այլասիրության, որով կարող ենք, չզիջելով մեր ցեղի շահերը, միաժամանակ կարեկցանք ցուցաբերել կենդանիների, բնության, ինչպես նաև՝ մարդկության մյուս ցեղերի նկատմամբ, որոնք մեր ցեղի թշնամիները չեն: Առնական այլասիրության ջատագովի նպատակն է նախ և առաջ բնության ամենալավ տեսակների պահպանումը, զարգացումը ու բազմացումը՝ միաժամանակ հնարավորինս չվնասելով բնության մյուս արարածներին: Չպետք է թույլ տանք, որ թշնամի մանիպուլյատորները շահարկեն ու մեր դեմ օգտագործեն մեր այս հանդուրժողականությունն ու այլասիրությունը, ինչպես անում են արդեն: Զգոնությունը այս հարցում պիտի միշտ պահպանվի, քանի որ, ինչպես ասել են նախկին իմաստունները՝ ազատության գինը հենց հավերժ զգոնությունն է:

Առողջապահական ու բնապահպանական խնդիրները լուծելը օբյեկտիվորեն ամենահեշտը պիտի լինի, բայց բավականին բարդ է, քանի որ կենցաղի ու սովորությունների հետ է կապված, որոնք անհնար է միանգամից փոխել: Սակայն, տարիների ընթացքում սերնդեսերունդ մենք կարող ենք այս փոփոխություններով գրեթե ամբողջությամբ վերացնել հիվանդությունները և կարող ենք մաքրապատել մեր սուրբ հայրենի հողը: Մենք կունենանք առողջ հոգիներ առողջ մարմիններում, և առողջ մարմիններ՝ ավելի պայծառ ու կանաչ աշխարհի մեջ:

Հենապյուն 12

Զինված ուժեր և ազգ-բանակ

Հզոր պետություն ու բարգավաճ հասարակություն կերտելու համար մեր ջանքերն անիմաստ կլինեն, եթե չկարողանանք պաշտպանել այդ պետությունն ու հասարակությունը: Ուստի՝ քաջ գիտակցում ենք, որ մեր անկախ պետականության և հայրենիքի անվտանգության թիվ մեկ երաշխավորը Հայաստանի Զինված ուժերն են, և մեզ նման՝ թշնամիներով շրջապատված փոքրաթիվ ազգի համար ազգ-բանակ դառնալը անհրաժեշտություն է ոչ միայն մեր անկախությունը պահպանելու, այլև գոյատևելու համար: Մեր շարժման գլխավոր նպատակն է մեր ազգին և պետությանը ուժի գործոնի վերածելը, որպեսզի կարողանանք թշնամի կիրառած ուժին ավելի մեծ ուժով պատասխանել, և հարվածին՝ ավելի հուժկու հակահարվածով: Անատամ երկրին միշտ անօգուտ կերպով խղճում են, ատամնավորի հետ՝ հաշվի նստում: Այդ իսկ պատճառով պետք է լիովին փոխենք մեր բանակի ռազմավարությունը և մեր զինվորների հոգեբանությունը՝ կառուցելով ոչ միայն պաշտպանողական, այլև ավելի կարևոր՝ հարձակողական բանակ, քանի որ դա է հաղթական զինված ուժեր ունենալու միակ ճանապարհը: Միմիայն այդպիսով մենք կարող ենք սանձահարել մեր թշնամու ագրեսիան ու հարձակումները մեր պետության դեմ: Այս առանցքային, կարևոր փոփոխությունից հետո նոր պիտի մտածենք զարգացնել մեր ռազմարդյունաբերությունը, որպեսզի ճիշտ ուղղությամբ զարգանա: Այսպիսով՝ զենքեր արտադրելուն զուգահեռ միաժամանակ օտար երկրներից կգնենք այն զենքերը, որոնք կհամապատասխանեն մեր զինված ուժերի նոր ռազմավարությանը: Բանակի ռազմավարությունը փոխելուց ու արդիականացնելուց բացի նույնքան կարևոր ու անհրաժեշտ է մեր պետության հետախուզությունը ամեն կերպ զարգացնելը, քանի որ առանց լուրջ հետախուզության՝ բանակը կույր-կույր է գնում պատերազմի: Նույնպես պետք է չափազանց կարևորվի քարոզչական պատերազմը, որը հաճախ անտեսվել է, քանի որ այն նույնքան կարևոր է, որքան իրական զենքերով պատերազմը: Պարտադիր զինծառայությունը ոչ միայն պետք է պահպանվի, այլև պետք է խստացվի՝ միաժամանակ բարելավելով զինվորների ծառայության պայմանները՝ թե՛ զորամասում, թե՝ դիրքերում: Սակայն, հաղթող զինված ուժեր ունենալու համար պետք է լինի համապատասխան քաղաքացիական թիկունք, հետևաբար՝ պետք է ռազմականացվեն մեր մշակույթն ու հասարակությունը՝ Հայաստանը վերածելով անառիկ բերդի՝ ժամանակակից «Սպարտայի», որի քաղաքացիները ի ծնե կդաստիարակվեն զինվորական հոգեբանությամբ՝ ռազմական փորձ ստանալով և ամեն պահի պատրաստ լինելով մարտի: Հայաստանը պիտի ամեն առումով ձգտի դառնալ, տոկոսային հարաբերակցությամբ, ամենառազմականացված երկիրը աշխարհի վրա: Մեր ազգի գոյությունն ապահովելու և մեր անկախությունը պահպանելու ուրիշ ձև չկա: Սա է երկարատև խաղաղություն պարտադրելու միակ ճանապարհը:

Այն փաստը, որ մենք հազարավոր տարիների ընթացքում գտնվելով քաղաքակրթությունների բախման կիզակետում չենք ոչնչացվել, ապացույց է մեր պայքարի ոգու ու ռազմական բնույթի, որից սարսափում են մեր թշնամիները: Դարեր ի վեր հայ զինվորը վախ է ներշնչել մեր ոսոխին, և մեր ռազմիկները ճանաչված են եղել՝ որպես աշխարհում ամենալավ ռազմիկներից մեկը: Սրա ամենավերջին օրինակը, իհարկե, Արցախյան Ազատագրական պատերազմն էր: Այդ է պատճառը, որ մեր թշնամիները անընդհատ ուզեցել են մեզ հոգեբանորեն կոտրել, որպեսզի մենք

չհավատանք մեր ռազմական ներուժին ու դրա փոխարեն ընդունենք ստրկական մտածելակերպ։ 44-օրյա դավադիր պատերազմի նպատակը հենց դա էր, որ մեր ներքին թշնամիների ու դավաճանների միջոցով մեր բանակի մեջքին դանակ խրեն և մեզ հոգեպես կոտրեն, որպեսզի մենք ապագայում այլևս հույս չունենանք ռազմական հաղթանակների։ Սակայն, անսասան հայորդիներին նման դավադրություններով չի լինի խաբել ու ստորացնել։ Մենք գիտենք, որ կարող ենք մեր բոլոր թշնամիներին հաղթել, եթե մեր դեմ ներսից դավեր չնյութվեն։ Ազգովի պետք է սա հասկանանք և նոր անցնենք հզոր բանակ կառուցելուն։

Գաղտնիք չէ, որ մեր զենքերի արդիականությունը ու քանակը զիջում են մեր թշնամիների բանակներին։ Դրա համար իշխանության գալու ժամանակ մենք մեր բանակը արդիականացնելու համար միանգամից կանցնենք գործի և բնավ չենք հապաղի այդ հարցում։ Պիտի ոչ միայն տարբեր երկրներից զենքեր գնենք, այլև՝ հիմնենք մեր ռազմական արդյունաբերությունը և մենք մեր զենքերը սկսենք պատրաստել, անկախ նրանից, թե որքան անհավանական դա կթվա այս պահին։ Այստեղ էլ պիտի իմանանք, որ ամեն մեծ բան սկսվում է փոքր քայլերից, հետևաբար՝ նախ փոքր զենքեր արտադրելուց հետո կանցնենք ավելի մեծ զենքեր արտադրելուն, եթե մնանք վճռական ու հետևողական։

Ժամանակակից զենքեր ու գործարաններ ունենալուն զուգահեռ՝ պիտի ունենանք զորք, որը կհամապատասխանի այդ զենքերի որակին։ Դրա համար մենք միաժամանակ կբարելավենք մեր զինվորների ծառայության պայմանները՝ որակյալ համազգեստներ ու իրեր տալով և զորամասերն ու դիրքերը վերանորոգելով։ Բայց միաժամանակ կխստացվի ծառայությունը, որտեղ, ուժային սպորտաձևերով ու մարտարվեստով զբաղվելուց բացի, ամեն օր կանցնեն տակտիկական վարժությունների և կսովորեն մեր ունեցած բոլոր զենքերը կիրառել, ոչ միայն այն զենքը, որը յուրաքանչյուր զինվորին տրամադրվել է։ Պայմանագրային զինծառայությունն էլ կխստացվի՝ միաժամանակ սահմանելով ավելի բարձր աշխատավարձ։ Մեր բանակին ու զինվորների աչքերին նայելիս թշնամու դեմքը պիտի սփրթնի, և նա, ուժի լեզվով մեզ հետ խոսելու փոխարեն, վախից մտածի բանակցելու մասին։

Միմիայն այսպիսով մենք կարող ենք խաղաղություն պարտադրել և ոչ՝ մուրալ։ Իրավունք չունենք նույնիսկ խոսելու խաղաղության մասին, եթե պատրաստ չենք պատերազմի։ Կարող ենք խաղաղություն պարտադրել միայն այն դեպքում, եթե ազգովի դառնանք բանակ, և եթե իսկապես արժևորում ենք խաղաղությունը, սա չենք կարող աչքաթող անել, որովհետև միայն հզոր Հայաստանով է հնարավոր այս տարածաշրջանում կայունություն ու խաղաղություն հաստատել։ Լիովին անհեթեթություն է ցանկանալ ամրապնդել անկախությունը, միաժամանակ փորձելով խաղաղությանը պատրաստվել և «խաղաղության պայմանագրի» հետևից ընկնել, քանի որ պատմությունը մեզ բազմիցս ցույց է տվել, որ երկիրը կարող է ամրապնդել իր պետության անկախությունը ոչ թե պատրաստվելով խաղաղությանը կամ խաղաղության հետևից վազելով, այլ՝ միմիայն պատերազմին պատրաստվելով։

Մենք հաղթեցինք առաջին Արցախյան ազատամարտը, որովհետև հարձակողական պատերազմ էինք վարում և պատերազմը տանում թշնամու տարածք, իսկ 44-օրյա դավադիր պատերազմը պարտվեցինք, որովհետև այդ նույն մարտական ռազմավարությունը մեր թշնամին վարեց մեր դեմ։ Այդպես կարողացավ ոսոխը անել, որովհետև այս վերջին քսան տարում լավ ուսումնասիրել էր իր պարտության պատճառը, սակայն մենք փոխանակ մեր ազատամարտիկների հաղթական ռազմավարությամբ բանակ կառուցեինք, որը իսկապես կլիներ հայկական բանակ իր բոլոր առումներով,

պատճեն արեցինք օտար, ռուսական բանակի նախագիծը և կիրառեցինք մեր բանակի համար: Չափազանց կարևոր է, որ մեր ռազմական ակադեմիաներում սպաները վերլուծեն Արցախյան առաջին ազատամարտի հաղթանակի, ինչպես նաև 44-օրյա դավադիր պատերազմի պարտության պատճառները, որպեսզի առաջինը նորից կրկնվի, իսկ երկրորդ՝ այլևս երբեք:

Սյունիքը պաշտպանելու համար, մենք կգնանք դեպի նոր ու ավելի մեծ պարտություն, եթե միայն պաշտպանողական ռազմավարություն ունենանք: Սյունիքը պաշտպանելու միակ ձևն այն է, որ մենք ակտիվ պաշտպանությամբ կռիվը տանենք թշնամու դաշտ, ինչպես արեցինք 90-ականներին և ազատագրեցինք Արցախը: Միայն պաշտպանողական պատերազմ մղելով՝ մենք հնարավորություն չենք ունենա մեր հողերը պահել. դա գուցե հնարավոր կլինի մակերեսով մեծ պետությունների համար, բայց մեզ նման փոքր տարածք ունեցող երկրի համար կործանարար հետևանքների կբերի:

Պատմությունը մեզ նաև ցույց է տվել, որ, երբ միայն մեր հույսը դնում ենք կանոնավոր սպայական բանակի վրա և բացառում ենք ազատագրական ոգին, պարտություն ենք ունենում, ինչպես ունեցանք 1920թ.-ին և 2020թ.-ին, քանի որ այդ սպայական կազմը կա՛մ եղել են Մոսկվայի ուղիղ, կա՛մ էլ՝ ազդեցության գործակալներ: Մենք հաղթանակներ ենք տարել, երբ այդ սպայական պրոֆեսիոնալ կազմը առաջնորդվել է այն վճռական անձանց կողմից, ովքեր տոգորված են եղել հայ ազատագրական ոգով, ինչպես եղավ 1918թ.-ի ու Լեռնահայաստանի հերոսամարտերում, և Արցախյան ազատագրական պատերազմում: Սա կարևոր գործոն է, որը չպետք է անտեսենք:

Ցանկացած երկրում, հատկապես՝ պատերազմում գտվող երկրում, ինչպիսին մեր երկիրն է, դասալքությունը պիտի դատապարտվի ու դավաճանություն համարվի, և դասալիքները չպետք է կարողանան իրենց գլուխները բարձր պահել: Այն տղաները, որոնք առողջության խնդիրներից ելնելով չեն կարող հավասար ծառայել մյուս զինվորների հետ, կծառայեն բանակում այլ ձևերով, և վստահ ենք, որ այդ ձևերի պակասություն չի լինի: Ապագա արիական պետության մեջ բանակում ծառայելը կհամարվի իսկական մկրտություն՝ տղային տղամարդ դարձնելու ամենակարևոր գործընթացը:

Արցախյան առաջին ազատամարտում հաղթեցինք, երբ շատ ավելի անբարենպաստ պայմաններում էինք: Հատուկ դավադրություն է, որ մեր միջից հանել են հաղթելու հույսը և ուզում են առհասարակ ոչնչացնել հաղթելու կամքը: Ցանկացած ժողովրդի հնազանդեցնելու և ստրկացնելու առաջին քայլը այն է, որ սերմանեն պարտվողի հոգեբանությունը և արմատախիլ անեն հաղթելու բոլոր հույսերը: Սակայն, մենք վստահ ենք, որ հայ ազգը հաղթելու կամք ունեցող ազգ է իր ոգով ու էությամբ: Մեր շարժման գլխավոր նպատակներից է ոչնչացնել այս հնազանդվելու փիլիսոփայությունը, և մեր հերոս նախնիների օրինակներին հետևելով՝ կրկին անգամ բարձրացնենք մեր մարտական ոգին և դառնանք հաղթական ազգ, որը կկարողանա իր կամքը թելադրել իր թշնամիներին:

Մենք այլևս միամիտ չենք կարող լինել ու պարտավոր ենք ավելի ուժեղ քաղաքականություն վարել: Որքան էլ որ կարևոր է դաշնակիցներ ունենալը ու ռազմաքաղաքական դաշինքներ ստեղծելը, այնուամենայնիվ, մենք մեր հույսը միայն մեզ վրա պիտի դնենք ու միանգամից չհավատանք դրսից եկած օգնություններին: Հույսը միայն մեզ վրա դնելը ամենևին չի նշանակում չփնտրել կամ չուզենալ դաշնակիցներ, ընդհակառակը՝ միայն մեր բազկի ուժին հավատալով մենք կարող ենք ձեռք բերել իսկական դաշնակիցներ: Մենք պետք է ձգտենք բոլոր բարեկամական երկրների հետ լավ դիվանագիտական հարաբերություններ պահպանել՝ երբեք չզիջելով մեր ինքնիշխանությունն ու անկախությունը: Որքան շատ ձգտենք ամրապնդել մեր անկախությունը, այնքան ավելի մեծ կլինի իրական դաշնակիցներ ձեռք բերելու հավանականությունը:

Սակայն, մեր խնդիրը շատ ավելի խորքային է, քան Արցախի հիմնախնդիրը: Արցախի կորուստը ապացույց եղավ մեզ, որ մեր արժեհամակարգը, մտածելակերպը, հոգեբանությունը և կամքը լրիվ աղավաղված են ու կոռումպացված: Մինչև դրանք չշտկենք՝ ապագայում պիտի սպասենք ավելի մեծ կորուստների: Դրանց շտկվելու դեպքում ոչ միայն Արցախյան հիմնախնդիրը վերջնականապես կլուծվի մեր օգտին, այլև՝ մեր բոլոր հիմնարար խնդիրները, որոնք սպառնում են մեր պետականության գոյությանը:

Մենք մեր արտաքին դիվանագիտական հարաբերություններում կօգտագործենք Հայաստանին օգտակար բոլոր հին ու նոր փաստաթղթերը՝ անկախ նրանից, թե ուրիշ պետությունները ինչ կկարծեն դրանց մասին: Եթե դա բխում է Հայաստանի պետականության շահերից, ուրեմն որպես խաղաքարտ կօգտագործվի բանակցությունների սեղանին: Առանց ողնաշարի՝ չենք կարող օբյեկտ լինելու կարգավիճակից նորից սուբյեկտ դառնալ և չենք կարող մեր կամքը թելադրել միջազգային հարաբերություններում:

Ոչ մեկը ծնկաչոք ազգի հետ չի բանակցում, ոչ մեկը մուրացկանին չի աջակցում, և ոչ մեկը մեր կռիվը մեր փոխարեն չի տալու: Եթե ուզում ենք դաշնակիցներ ունենալ, պետք է նախ մենք ինքներս հզորանանք, քանի որ այս աշխարհում թույլերը բարեկամներ չեն ունենում: Եթե ծնկաչոք վիճակում, առանց մեզնից ոչ մի բան ներկայացնելու, դաշնակիցներ փնտրենք, ոչ մեկը մեզ լուրջ չի ընդունի և ցանկալի դաշնակից չի համարի, և առհասարակ անհարգալից վերաբերմունք կունենան մեր հանդեպ: Դրա համար մեր առաջին քայլը պետք է լինի ամեն գնով մեր հարգանքը ու պատիվը վերականգնելը:

Մեզ ուրիշ լուծում չի հետաքրքրում՝ բացի նրանից, որ Հայաստանը պահպանի իր

անկախությունը ու մեր բանակին հնարավորություն տա հզորանալու։ Մենք գաղափարական մարտիկների ռազմաքաղաքական ու արիական պետություն պիտի կազմենք, որը կպայքարի հանուն ազգի ու հայրենիքի՝ չդառնալով խամաճիկ ոչ մի ուժի ձեռքում և կգործի բացառապես Հայաստանի շահերի համար՝ չշեղվելով այն ցեղակրոն տեսլականից, որ Հայաստանը միայն հայերին պիտի պատկանի ու ոչ երբեք՝ հայի արյուն տենչող քաղաքակրթության ու մարդկության թշնամիներին։

Մենք չենք կասկածում մեր ազգի ներուժի վրա։ Հավատում ենք, որ կարող ենք մյուս արիական ազգերին ցույց տալ մեզ հետ դաշինք կազմելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, և աշխարհին էլ ցույց կտանք՝ Հայաստանի հետ դաշինք կնքելը նշանակում է անվտանգությանը, արդարությանը ու հաղթանակին մոտենալը։

«Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշը

Մեր ցեղակրոն շարժման՝ «Հոսանք»-ի խորհրդանիշն ու դրոշն է հայկական հավերժության նշանը՝ ոսկեգույն ու սպիտակով՝ մուգ կարմիր ֆոնի վրա, որը գալակտիկայի պտույտներով խորհրդանշում է տիեզերքում երկու հակադիր ուժերի միասնությունը, առանց որի՝ տիեզերքում չի լինի արարում: Հավերժության նշանի պտույտը նաև բնութագրում է հենց «Հոսանք»-ը՝ ցեղի հավիտենական շարժումը: Մուգ կարմիրն էլ խորհրդանշում է ցեղի արյունը՝ այն օղակը, որի միջոցով մենք կարող ենք կապվել Արարչին ու արարչաստեղծ գործընթացի հետ: Որքան մաքուր ու անարատ լինի ցեղի արյունը, այնքան ավելի կայտառ կլինի ցեղի հոգին և հզոր կլինի կապը Արարչի հետ: Այլ կերպ ասած՝ մեր արյունով ենք կապվում հավերժության հետ:

Հավերժության նշանն էլ ունի ութ թև՝ չորս ոսկեգույն և չորս սպիտակ, որովհետև ութ թիվը ոչ միայն հայկական մշակույթում ամենատարածված թիվն է, այլև մաթեմատիկայի ու գիտության մեջ մեծ նշանակություն ունեցող թիվ է: Ութ թիվը մաթեմատիկայի մեջ հենց շրջված հավերժության նշանն է (∞): Մենք ապրում ենք քառաչափ (երեք առանցքները՝ ժամանակի հետ) իրականության մեջ, բայց այդ իրականությունը բաղկացած է «սիս» (փոքր) և «մասիս» (մեծ) աշխարհներից, որոնց համադրությունը տալիս է ութչափանի տարածություն:

Ոսկեգույնի մեջ մենք տեսնում ենք մեր արիական մշակույթի վեհ արժեքները, սպիտակի մեջ՝ ազգային գաղափարները և մուգ կարմիրի մեջ՝ մեր հայրենիքի անկախության ու բարգավաճման համար թափված արյունը: Հավերժության նշանի մեջ էլ տեսնում ենք մեր ցեղի զարգացման համար մղվող հավիտենական պայքարի հաղթանակը: Այս ամենը համապատասխանում է մեր կարգախոսներից մեկին՝ «Պատվի՛ր Մշակույթդ, Սիրի՛ր Ազգդ, Պաշտպանի՛ր Հայրենիքդ»: Ոսկեգույնն ու մուգ կարմիրը նաև հայկական Արտաշեսյանների տոհմի, մասնավորապես՝ Տիգրան Մեծի դրոշի գույներն էին, ում կառավարման ժամանակ Մեծ Հայքը հասել է իր հզորության գագաթնակետին: Սպիտակն էլ եղել է հայկական Բագրատունյաց տոհմի ու հետո Կիլիկիայի հայկական թագավորության դրոշներում, որոնք թշնամիների դեմ ազգային պայքար մղելով, վերականգնել են մեր պետականությունը: Ահա այսպես՝ մեր նախկին արքայական գույների համադրությամբ մեր անպարտելի ազգային խորհրդանիշ՝ հավերժության նշանով, մենք հետ ենք բերելու մեր հայրենիքի ու պետության փառքն ու պատիվը:

«Հոսանք»-ի զինանշանի վահանը խորհրդանշում է մեր գերագույն արժեքների՝ ազգի, հայրենիքի, անկախ պետականության պաշտպանությունը: Թուրը խորհրդանշում է խաղաղություն՝ միայն մեր թշնամիների պարտությամբ ու մեր զինված ուժերի հաղթանակով, իսկ վահանի ու թրի վերևում հայացքը դեպի արևմուտք (Արարատ) սևեռած Տարոնի արծիվը խորհրդանշում է, որ մենք մեր պայքարը հաջողության հասցնելու ու մեր նպատակները իրականացնելու համար պետք է արծվի պես քաջ, ազնիվ, ուժեղ, ճշմարիտ, խելացի, արդար, հավատարիմ, հեռատես, նպատակասլաց, հաստատակամ ու իմաստուն լինենք: Զինանշանը նաև Գարեգին Նժդեհի 1920թ.-ին ստեղծած Լեռնահայաստանի (որը պատմության առաջին հակաթրքաբոլշևիկյան պետությունն է եղել) զինանշանի թարմացված ու ժամանակակից տարբերակն է:

«Հոսանք»-ի խորհրդանշի գրավոր տարբերակում հայկական տառերով գրված է «ՀՈՍԱՆՔ»՝ ոսկե կայծակը մեջտեղում, և այդ կայծակը խորհրդանշում է ոչ միայն հենց էլեկտրականությունը՝ հոսանքը, այլև՝ մարդկությանը լույս բերող կայծը, որը

բնութագրում է հենց «Հոսանք»-ի նպատակը: Այդ կայծակը նաև խորհրդանշում է հաղթանակ՝ ըստ գերմանացի գաղափարախոս ու միստիկ Գվիդո ֆոն Լիստի, ով հին սկանդինավյան «ռունները» անվանել էր «Արմանեն» ռուներ (այսինքն՝ Արմանի ռուներ)՝ գուցե ենթագիտակցաբար զգալով, որ այդ խորհրդանիշները ունեն շատ հին հայկական արմատներ:

Այնպես որ՝ ամեն շարժում պիտի հենց այնպես չօգտագործի անուններ, խորհրդանիշներ և դրոշներ՝ առանց որևէ պատճառի ու իմաստի, ինչպես հիմա գրեթե բոլոր քաղաքական կուսակցություններն ու շարժումներն են անում: Անիմաստ խորհրդանիշներից կբխեն անիմաստ շարժումներ, իմաստալից խորհրդանիշներից՝ իմաստալից շարժումներ: «Հոսանք»-ի դրոշը, կարճ ասած, ապագա հաղթական ու արիական Հայաստանի պետության դրոշն է:

Նժդեհն ասում էր՝ «անպարտելի է այն դրոշը, որը պարզվում է ցեղի համար ու ցեղի անունով», և վստահ ենք, որ հենց «Հոսանք»-ի դրոշի մասին էր խոսքը:

Վերջաբան

Այս պահին, երբ կարդում եք սա, մեր թշնամիները կազմակերպված ձևով օր ու գիշեր մտածում են՝ մեզ ինչպես բնաջնջել Երկիր մոլորակի երեսից: Դրա համար շատերը կկարծեն, որ անիմաստ է հիմա նստել ու հավատամք գրել, կարդալ ու տարածել: Կասեն, որ «սրա ժամանակը չկա» և պետք է ավելի «կտրուկ քայլերի դիմենք», մինչդեռ տարիներն անցնում են ու նրանք այդ ժամանակվա ընթացքում ոչ մի կտրուկ քայլերի չեն դիմում ու ոչինչ չեն անում: Նրանց էգոները աղավաղում են իրենց տեսողությունը: Այս կարճատեսությունը ու անհամբերությունը շատ կործանարար երևույթ է, որը պետք է արմատախիլ անենք, եթե ուզում ենք ունենալ առողջ ու հաջողակ քաղաքական պայքար: Առանց հեռատեսության ու հաստատակամության՝ մեր քաղաքական միտքը կշարունակի մնալ «շրիշակից ներքև» անլուրջ ու քաղքենի մակարդակի վրա, որը հենց թշնամու ուզածն է: Մեր թշնամիները, բացի հեռատես ու հաստատակամ լինելուց, նաև շատ կազմակերպված են, և մենք կարող ենք նման թշնամուն հաղթել, եթե մենք էլ հեռատես, հաստատակամ ու կազմակերպված լինենք: Մենք կազմակերպվելու համար պետք է գաղափարապես նույն հարթակի վրա լինենք, և այդ նպատակին պիտի ծառայի այս Հավատամքը: Մենք պետք է մեկ օրգանիզմի, մեկ մարմնի պես գործելով՝ առաջ գնանք:

Այնուամենայնիվ, այս հավատամքը սահմանափակ դոգմատիկ տեքստ չէ, քանի որ ճշմարտության որոնումը վերջ չունի, դրա համար միշտ պիտի մեր միտքը բաց պահենք: Ամեն դեպքում համոզված ենք, որ այն գաղափարները, որոնք գրված են այս հավատամքում, հիմնարար ճշմարտություններն են, որոնցով պիտի կառուցենք մեր քաղաքական շարժումն ու երազած պետությունը: Այս հավատամքը ոչ թե պատ է, որը մեզ մտավոր բանտի մեջ կպահի, այլ դուռ, որը մեզ համար կբացի բարգավաճման և հաղթանակի ճանապարհը:

Իրականում մեր անելիքը ոչ թե բարդ է, այլ բավականին պարզ է, բայց միևնույն ժամանակ՝ շատ դժվար, դրա համար չպետք է անիմաստ ժամանակ ծախսենք լուծումներ փնտրելու համար և պետք է միանգամից անցնենք գործի, և համբերատար գործելով՝ մեր կատարած աշխատանքի պտուղները քաղենք տասը, քսան կամ նույնիսկ հիսուն տարի հետո: Այդ պտուղները գուցե միայն մեր ապագա սերունդները քաղեն, բայց դա ոչ թե մեզ պիտի հուսահատեցնի, այլ ընդհակառակը՝ պետք է ոգևորի, քանի որ մեր պայքարը ակնհայտորեն մղում ենք մեր ազգի ապագայի համար:

Այս հավատամքում գրված ամեն նախադասության հետ պետք չէ համաձայն լինեք, դա պարզապես անհնար է. նույնիսկ երկու մտերիմ ընկերներ երբեք ամեն հարցում չեն կարող համաձայն լինել: Նորմալ է ու բնական, որ որոշ մանրամասնություններում տարաձայնություններ ունենաք, բայց ընդհանուր գաղափարների հետ, կարծում ենք, ամեն՝ ազգի մասին մտածող հայը համաձայն կլինի: Մի քանի նախադասության հետ համաձայն չլինելու պատճառով՝ «Հոսանք»-ին միանալ չուզենալը տգիտություն է ու եսասիրություն:

Այս հավատամքում շատ գաղափարներ ու նպատակներ նշվեցին, բայց չմոռանանք, որ մեր գերագույն նպատակը մեր ազգի գոյատևումն ու զարգացումը երաշխավորելն է, և մեր հայրենիքի անվտանգության ու հզորացման ամրապնդումը, բայց դրան միայն կարող ենք հասնել միասին՝ քայլ առ քայլ՝ հաստատակամ ու հետևողական ծանր աշխատանքով: Չմոռանանք, որ ջրի կաթիլները ի վերջո կարող են քար ծակել: Այդ գերագույն նպատակին հասնելու միակ միջոցը ազգային պետություն կերտելն է, որտեղ երկրի ռեսուրսները, կառավարման և քաղաքական/տնտեսական համակարգը, օրենքները և բոլոր ուժային

լծակները օգտագործվում են ազգի զարգացման ու հայրենիքի անվտանգության ու բարգավաճման համար՝ այսպիսով ամրապնդելով մեր պետականության ինքինիշխանությունն ու անկախությունը:

Հասկանում ենք նաև, որ այս հավատամքում նշված շատ գաղափարներ միանգամից իրագործել չի լինի, և փոփոխությունները կկատարվեն սերունդների ընթացքում: Ամեն դեպքում պիտի ապագայում մեր ուզածը ջրի պես ջինջ լինի մեր մտքում, բայց պիտի ապրենք ու գործենք ներկայով և ամեն մի փոքր հաղթանակ առաջընթաց համարենք մեր նպատակին հասնելու համար, քանի որ մեծ հաղթանակը բաղկացած է լինում հենց փոքր հաղթանակներից:

Այս հավատամքում կարողացա 15 կարևորագույն հարցերում ներկայացնել մեր շարժման պայքարի ողջ դիրքորոշումը, բայց կարող եմ ավելի հակիրճ ներկայացնել հետևյալ 15 բառերով. մենք պետք է ապահովենք մեր ազգի զարգացումը և բարգավաճ ապագա կերտենք գալիք հայ սերունդների համար:

Մեր հայրենակիցների մի մասը բացասական ձևով կասի, որ մեր գաղափարները «ֆաշիստական» կամ «նացիստական» են, բայց նման մարդկանց համար շատ կարևոր չէ ճշմարտությունը, և նրանք, առանց մտածելու, կրկնում են այդ բառերը, քանի որ թշնամական քարոզչությունների ազդեցության տակ են: Նաև կլսենք, որ մեր գաղափարները «ծայրահեղական» են, բայց մենք կարծում ենք, որ մեր թշնամիներն են մեզ ծայրահեղական վերաբերվում, և առհասարակ մեր ներկա վիճակն է ծայրահեղական: Մեր առաջարկած լուծումները այս ծայրահեղ վիճակից դուրս գալու ճանապարհն են: Նրանք չեն հասկանում, որ այս ծայրահեղ վիճակից դուրս գալու համար մենք պետք է դիմենք արտառոց ու հեղափոխական լուծումների: Մարդկանց մեծ մասը ցանկանում է միշտ մնալ «քաղաքականապես կոռեկտ» սահմաններում, բայց սա երբեք չպիտի լինի որպես մի բարոյական սկզբունք, քանի որ երկարաժամկետ հեռանկարում մենք չենք կարող արմատական փոփոխություններից խուսափել: Մեր առաջնորդող սկզբունքն այն է, որ մեր ազգը պետք է ապրի, մեր հայրենիքը՝ բարգավաճի, մեր պետությունը՝ հզորանա, և մենք կանենք այն, ինչ պետք է անենք դա հավաստիացնելու համար:

Մենք չենք կարող մի բան ասել ու անել, որ բոլորին գոհացնենք, հետևաբար՝ չպետք է այդ ուղղությամբ աշխատենք: Մեր նպատակը ճշմարտություն քարոզելն է, և նա, ով ստերով ուզում է բոլորին գոհացնել, վերջում բոլորի ատելությանն է արժանանում: Ներկա ժամանակների թյուր կարծիքները ու տեսակետները չպետք է որոշեն, թե մենք ինչպիսի գաղափարներ քարոզենք և ինչ տեսակ աշխատանք կատարենք. հավատարմությունը դեպի գերագույն ճշմարտություն պետք է թելադրի մեր գործողությունները:

Քաղաքականության մեջ ամենակարևոր բանը հավատարմությունն է մի վեհ գաղափարի հանդեպ, այն գաղափարի, որը երաշխավորելու է մեր ազգի, հայրենիքի և մեր պետականության գոյությունը և բարգավաճումը, քանի որ այդ հավատարմությունից է բխում արժանապատվություն, արժանապատվությունից՝ քաջություն, քաջությունից՝ հարգանք, հարգանքից՝ ուժ, ուժից՝ հզորություն, և հզորությունից՝հաղթանակ ու փառք: Այս օրհասական ժամանակների ու մեր վճռական պայքարի համար, սա պետք է լինի բոլոր նվիրյալ հայ ազգայնականների բանաձևը:

Վաղուց հասկացել ենք, որ մեր հասարակության հիվանդությունները չենք կարող բուժել ընդամենը քվեաթերթիկներով, բարեփոխումներով կամ պահպանողական միջոցներով, որոնք ընդամենը պահպանում են ներկա քաոսային ստատուս քվոն: Մեզ միայն ցեղային արժեքների վրա հիմնված գիտակցության հեղափոխությունը կարող է

ոտքի հանել, քանի որ ցեղային արժեքները համարում ենք ազգային ինքնագիտակցության ամրապնդման կարևորագույն միջոց:

Ինչպես արդեն նշվեց, ծայրահեղ ժամանակները պահանջում են արմատական միջոցներ, և մեր հիմնարար գաղափարները ու սկզբունքները զիջման ենթակա չեն կարող լինել: Ժամանակները կտրուկ փոխվում են, և մենք ամենուրեք տեսնում ենք, որ աշխարհի բոլոր գերտերությունները թուլանում են՝ իրենց հետ ապակայունացնելով հասարակական ու տնտեսական համակարգերը: Շուրջբոլորը տեսնում ենք, որ բոլոր՝ ներկա համակարգերը փլուզվելու են հենց իրենց ստերի ծանրության տակ, որը մեզ համար նոր հնարավորությունների պատուհան կբացի: Այս գալիք նոր դարաշրջանի համար պետք է ունենալ նոր հեղափոխական գաղափարներով համապատասխան հավատամք, որով կարող ենք հին աշխարհի մոխիրների վրա նոր աշխարհ կառուցել: Այդ շրջադարձային փոփոխությունները տեսնելու համար, նախ մենք ինքներս միասին պետք է դառնանք այդ փոփոխությունը: Այս պահից պիտի կողմնորոշվենք և վճռական ճշմարիտ որոշումներ կայացնենք՝ ցեղակրոնությանը նոր շունչ տալով նոր հազարամյակի համար: Միայն այսպիսի մեծ նպատակի շուրջ է հնարավոր մեր ազգին միավորել, քանի որ կիսատ-պռատ մոտեցումները միշտ ձախողվել են ու կձախողվեն:

Մեր գաղափարները թե՛ տարբեր տեղերից գիտակցաբար վերցված գաղափարներ են, թե՛ դրանց որոշ մասերը հայկականացված են, և թե՛ լիովին նոր գաղափարներ են ավելացվել, որոնք բացառապես բխում են մեր տեսլականից ու հոգևոր աշխարհայացքից, բայց երբեք ուրիշ տեղերից ուղիղ պատճեն չեն արվել գաղափարները, քանի որ մենք երբեք կուրորեն չենք հետևում որևէ գաղափարախոսության: Ուզում ենք հնարավորինս թափանցիկ լինել մեր գաղափարներով, որպեսզի առանց որևէ խառնաշփոթի՝ կարողանանք գիտակից, նվիրյալ ու արժանապատիվ մարդկանց ներգրավել մեր պայքարի գաղափարական կորիզում: Եթե պարզ լեզվով մեր գաղափարները չգրենք ու չասենք, ինչպե՞ս պիտի կարողանանք մեր ուզած մարդկանց ներգրավել: Ինչպե՞ս պիտի կենաց-մահու կռիվ տանք քաղաքական ու մարտի դաշտում, եթե մենք հստակ չնշենք, թե ինչ նպատակի համար ենք պայքարում: Չենք կարող հերքել այն փաստը, որ գրավոր խոսքը, ինչպես նաև բանավոր խոսքը, ունեն շատ մեծ ուժ, դրա համար պիտի հստակ գրի առնվեն և հստակ ասվեն մեր նպատակները և գերագույն երազանքը: Գրավոր ու բանավոր խոսքերով և կենտրոնացած աշխատանքով կմարմնավորվի մեր երազանքը: Մեր պայքարը վախենալու կթվա շատերի համար, հատկապես՝ փափկամորթ երկչոտների համար, որոնք տարիներով ապրել են իրենց հարմարավետ շրջանակի մեջ: Դրա համար հարկավոր է ցուցաբերենք խիզախություն և կատարենք կարևոր քայլ ճիշտ ուղղությամբ, անկախ նրանից, թե որքան վախ լինի մեր մեջ, որովհետև խիզախությունը ոչ թե վախից խուսափելն է, այլ անկախ այդ վախից գործելը ու ռիսկի դիմելը:

Պարտավոր ենք անձնական պատասխանատվություն կրել ու մի բան անել, եթե նույնիսկ հաջողության հասնելու հավանականության տոկոսը շատ չնչին է: Որոշել ենք մի բան անել, քանի որ գործողության հետևանքով առաջացած կորուստները չեն կարող գերազանցել անգործության հետևանքով առաջացածներին: Մեր ապագա սերունդները պետք է դարեր անց հետ նայեն և իմանան, որ այս անհույս ժամանակներում կային պատվախնդիր հայեր, ովքեր չհուսահատվեցին ու ծնկի չեկան, ովքեր շարունակեցին պայքարել՝ անկախ բոլոր հանգամանքներից: Պետք է ապագային ուղերձ հղենք, որ այս ստերի դարաշրջանում կային ազնիվ մարդիկ, ովքեր պատմության ճիշտ կողմի վրա էին կանգնած:

Այս կյանքում երկու տեսակ մարդ կա. առաջինը ներկա աշխարհը դիտարկում է

որպես խավար մի վայր, որի պատճառով ոչ մի լույս չի կարող շողալ, և երկրորդը՝ ներկա աշխարհը դիտարկում է որպես խավար մի վայր, որի շնորհիվ լույսը շատ ավելի հեշտությամբ կարող է փայլել և լուսավորել խավարը: Մեզ հետաքրքրում է երկրորդ տեսակը՝ լավատես անհատները, ովքեր խավարի մասին բողոքելու փոխարեն մի փոքր մոմ կվառեն:

Շատերը մեզ «աջակողմյան» կհամարեն, բայց մենք մերժում ենք նման պիտակները. մենք ոչ «աջակողմյան» ենք, ոչ՝ «ձախակողմյան», ոչ էլ այդ երկուսի խառնուրդ՝ «կենտրոնամետ»: Մենք մերժում ենք մեր թշնամիների կողմից ստեղծած այս արհեստական սպեկտրը, որը ստեղծած է մարդկանց արհեստականորեն բաժանելու համար: Մեր աշխարհայացքը այս արհեստական քաղաքական սպեկտրի վրա չի կարող գտնվել, քանի որ այն լրիվ լղոզված է ու մեծ մասամբ չունի ոչ մի հստակություն, Մեզ համար ակնհայտ է, որ կա մեկ ճշմարիտ ուղի և բազմաթիվ կեղծ ուղիներ, և մենք, բնականաբար, ճշմարիտ ուղու կողմնակիցներն ենք: Այս միակ ճշմարիտ ուղին հիմնված է պատմական փաստերի և ճշգրիտ գիտությունների վրա: Մենք «աջից» վերցնում ենք ազգայնականությունը, բայց ոչ կապիտալիզմը, «ձախից» վերցնում ենք սոցիալիզմը, բայց ոչ՝ ինտերնացիոնալիզմը, «աջից» վերցնում ենք զենք կրելու իրավունքը, «ձախից» էլ ընդունում ենք կենդանիների իրավունքները և այլն: Այս ճշմարիտ դիրքն է, որը իրականում կարող է դրական փոփոխություններ բերել մեր հայրենիքի համար:

Մենք չենք թաքցնում իշխանության գալու մեր ցանկությունը, բայց մեր պայքարը ընդամենը իշխանության գալու նպատակի համար չէ, ինչպես տեսնում ենք գրեթե մյուս բոլոր քաղաքական շարժումների մոտ: Առհասարակ մենք չենք կարող հավատալ որևէ քաղաքական գործչի կամ շարժման, որի միակ գաղափարախոսությունը իշխանափոխությունն է, և որի միակ նպատակը իշխանության գալն է: Մեր շարժումը մեր գաղափարների ու խորհրդանշի նման անմահ է, և նման գաղափարներ ու անպարտելի դրոշ կրելով՝ մենք այս պայքարում մեր աչքերը չենք սևեռել հաջորդ տարվա, հաջորդ ընտրությունների կամ նույնիսկ հաջորդ տասնամյակի վրա, այլ՝ հավերժության վրա:

Այս ճակատագրական պայքարի արդյունքը ունի ընդամենը երկու տարբերակ. կա՛մ մեր թշնամիները կանցնեն մեր դիակների վրայով, կա՛մ մենք՝ նրանց դիակների վրայով: Ամեն ինչ գալիս է ի շրջանս յուր. Վահագնը կքաղի վիշապին, Հայկը կհաղթի Բելին: Ժամանակն է, որ մեր պատմության վերջին էջը թերթելու փոխարեն՝ ոսկե տառերով նոր էջ բացենք՝ դարձյալ ստանձնելով արիականության և արդարության առաջնորդ ազգի դերը: Մեր պայքարը պիտի հաղթի, եթե ուզում ենք մեր ցեղը արևի տակ իր տեղը չկորցնի:

Մեր բոլոր բանակցությունների ու որոշումների ժամանակ պետք է հաշվի առնվի այս ամենը: Մեր ողջ մշակույթը, գիտությունը, մտքերը, գործողությունները և քայլերը պետք է ծառայեն ցեղի հզորացման նպատակին. սա է նոր դարաշրջանի հրամայականը: Այս ամենը նախադրյալներ են և անհրաժեշտություն՝ առողջ ու առաջադեմ հասարակություն ստեղծելու համար. հասարակություն, որը բաղկացած կլինի անձնական պատասխանատվություն կրող, պարտականություններ ճանաչող, աշխատասեր, ազնիվ, առողջ և զտարյուն արժանապատիվ քաղաքացիներից: Մենք պիտի ստեղծենք լիովին նոր մարդ, նոր պետություն, նոր հասարակություն, նոր քաղաքակրթություն և այդ փառահեղ ապագայի սերմերը հենց հիմա պիտի ցանենք, և մեր պայքարով օրեցօր պիտի ջրենք այդ սերմերը:

Հայաստանում պիտի գա այն ժամանակը, որ մենք այլևս միայն չենք հպարտանալու մեր անցյալով: Կգա այն ժամանակը, որ մենք իսկապես կսկսենք հպարտանալ մեր ներկայով, քանի որ մեր աշխատանքով, մեր պայքարով, և մեր զոհաբերություններով

կստեղծենք հպարտանալու արժանի պետություն ու երկիր։

Մենք հավատում ենք, որ Հայաստանը դառնալու է քաղաքակրթության վերածննդի և մարդկության փրկության տապանը։ Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կդառնա Արևմուտքն ու Արևելքը, Հյուսիսն ու Հարավը իրար կապող քաղաքակրթական ճանապարհների կարևոր հանգույցը։ Մենք հավատում ենք, որ Հայաստանը պիտի դառնա ոչ միայն այս տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում ամենահզոր երկրներից մեկը, որի հետ բոլորը ստիպված են լինելու հաշվի նստել։ Հայաստանից կարող ենք այս խավարի մեջ մի հատիկ լուցկիով լույս սփռել՝ գալիք արիական զարթոնքի կայծը սկսելով, որը հրդեհի պես կտարածվի արիական մյուս ազգերի մոտ։ Հավատում ենք այս պատմական սուրբ առաքելությանը, որը մեզ՝ հայ արիներիս է տվել տիեզերքի Արարիչը։

Իրականում «Հոսանք»-ը ժամանակակից Բաբելոնի համար ներկայացնում է շատ վտանգավոր գաղափար՝ իսկապես անկախ ու հզոր Հայաստան։ Այդ գաղափարից մենք չենք կարող հրաժարվել՝ անկախ նրանից, թե որքան խոչընդոտներ կդրվեն մեր առջև։ Մենք պիտի ազգովի հոգեպես պատրաստ լինենք հերթով ջախջախելու այդ ամենը և չեզոքացնելու մեր դեմ ուղղված բոլոր գրոհները։ Մեր նպատակը մեծ է, և մեր մարտահրավերները անթիվ են, որովհետև պիտի կատարենք անկատարելին ու դա անելու համար պետք է զինանոցից օգտագործենք մեր ամենահզոր զենքերը. հավատարմությունը, նպատակասլացությունը, քաջությունը, նվիրվածությունը, քրտնաջան աշխատանքը և հաստատակամությունը, սակայն, եթե այդ զենքերն էլ չբավականացնեն, մենք կփոխհատուցենք կամքի ուժով։

Որքան էլ այժմ աներևակայելի թվա անկախ ու հզոր Հայաստան կերտելու այս երազանքի իրականացումը, այնուամենայնիվ, սա պետք է լինի մեր հիմնական տեսլականը և գերագույն նպատակը, որից իրավունք չունենք շեղվելու, քանի որ մեր նպատակը Արարչի նպատակն է և մեր պայքարը Արարչի կամքն իրագործելու պայքարն է։ Երազանք կա, որը Մեծ Հայքն է և այն պետք է իրականացվի։

«Հոսանք»-ի և նրա Առաջնորդի մասին

«Հոսանք»-ի մասին

«Հոսանք»-ը ստեղծվել է 2020 թվականի 44-օրյա դավադիր պատերազմից ու 2021 թվականի խայտառակ ընտրություններից հետո, երբ լիովին պարզ դարձավ, որ Հայաստանի ամբողջ քաղաքական համակարգը մինչև հիմքը փտած է ու հակահայկական: Այն վերից վար լի է օտարերկրյա գործակալներով ու դավաճաններով, ովքեր, բռնազավթելով լրատվամիջոցներն ու ստեղծելով տարբեր կուսակցություններ, կարողանում են իրենց կամքը թելադրել քաղաքական դաշտին: Ուստի «Հոսանք»-ը ստեղծվեց որպես այդ համակարգից դուրս գտնվող, մաքուր ու գաղափարական հիմքերով ազգայնական քաղաքական շարժում, որն իսկապես կպայքարի այն նեոբոլշևիկյան օրակարգի դեմ, որն ուղիղ սպառնալիք է մեր ազգին, հայրենիքին ու պետականությանը:

«Հոսանք»-ը պնդում է, որ այն, ինչ մեր արտաքին թշնամիները, մասնավորապես՝ ռուս-թուրք-սիոնիստական դաշինքը և նրանց հետ համագործակցող հայադավները, արեցին Արցախի Հանրապետության դեմ, փորձում են անել նաև ողջ Հայաստանի Հանրապետության հանդեպ՝ մեզ լիովին զրկելով անկախությունից, ինչը կհանգեցնի հայոց նոր ցեղասպանության: Հետևաբար մենք քաջ գիտակցում ենք, որ այս ամենը կանխելու համար պետք է նախևառաջ մեր փրկության հույսը դնենք միայն մեզ վրա և հենվենք սեփական ուժերին, որովհետև միայն նման ազգերն են ունենում իրական դաշնակիցներ, և ոչ թե հովանավորներ: Մեր նպատակն է պատմական ճիշտ պահին ազգային հեղափոխություն իրականացնել, որպեսզի կերտենք ազգային պետություն, որը մեր ազգին կհամախմբի մեկ գաղափարների, մեկ կամքի ու մեկ առաքելության շուրջ. միայն այդ ճանապարհով մենք կկարողանանք սանձել թշնամու բոլոր գրոհները մեր երկրի դեմ: Սակայն նաև լավ հասկանում ենք, որ ազգային հեղափոխությունը և դրանից

բխող ազգային զարթոնքն ու վերածնունդը օդից չեն կարող առաջանալ: Դրանք կարող են ծնվել միայն նվիրյալ չնչին փոքրամասնության քրտնաջան և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ այն մարդկանց, ովքեր տարիներ շարունակ նախապես պատրաստվել են ճիշտ պահին ճիշտ քայլեր նախաձեռնելու: Համոզված ենք, որ գալիք մեծ ճգնաժամի ընթացքում այս հակահայկական համակարգն ու իր ստեղծած պատրանքը թղթե տնակի պես փլուզվելու են սեփական ստերի ու կեղծիքների ծանրության տակ, և այդ ժամանակ ճակատագիրը հայ ազգայնականներիս կկոչի լիովին նոր ու արդար համակարգ հիմնադրելու: Մենք պարտավոր ենք մեր պայքարը շարունակել՝ մեր մտքում միշտ պահելով անկախ, միացյալ ու հզոր Հայաստանի տեսլականը՝ հանուն մեր հերոս նախնիների և ապագա սերունդների:

«Հոսանք»-ը չի ստեղծվել անփութորեն կամ ժամանակավոր նպատակներով՝ հայրենակիցներին խաբելու և կեղծ խոստումներով իշխանության գալու համար: Շարժումը պնդում է, որ մենք չենք կարող հավատալ որևէ քաղաքական գործչի կամ ուժի, որի միակ գաղափարախոսությունը իշխանափոխությունն է, և որի միակ նպատակը իշխանության հասնելն է: Մեզ համար իշխանությունը միայն միջոց է՝ Հայաստանը հզորացնելու ճանապարհին: Մեր շարժումը հիմնադրվել է հեռահար նպատակներով ու գաղափարական ամուր հիմքով, որպեսզի կարողանա Հայաստանում առաջացնել իրական, դրական ու մնայուն փոփոխություններ: Մենք մերժում ենք ստրկամտությունը, պարտվողական մտածելակերպը և հանձնվելու գաղափարախոսությունը, որոնք փորձում են ներարկել մեր ազգի մեջ՝ հատկապես վերջին դավադիր պատերազմից հետո: Այդ կործանարար մոտեցումը մեզ աստիճանաբար տարավ խայտառակ պարտության, իսկ հիմա էլ տանում է վերջնական փլուզման: Մենք կասկած չունենք, որ կրկին վերածվելով ուժային գործոնի, ճիշտ ռազմավարություն որդեգրելով, ազգային գաղափարախոսություն կրելով և մեր մարտական ոգին վերականգնելով կկարողանանք նորից հաղթանակ կերտել. միայն հաղթանակի ու արդարության հաստատման շնորհիվ է հնարավոր ունենալ իրական անվտանգություն և խաղաղություն: Մեր շարժումը ստեղծվել է, որպեսզի գալիք մարտահրավերների ու ճգնաժամերի ժամանակ կարողանանք մեր ազգին ճիշտ ուղղությամբ առաջնորդել և այդ խավարի մեջ ցույց տանք հաղթական ու լուսավոր ճանապարհը:

Այդ իրական փոփոխությունները բերելու համար «Հոսանք»-ը պատրաստ է մղել երկարատև գաղափարական պայքար՝ անկախ պետականությունը համարելով ոչ միայն գերագույն արժեք, այլև սրբություն: Մենք սին հույսերով չենք ապրում. գիտենք, որ միայն հաստատակամ ու անձնազոհ պայքարով, ազգային հեղափոխության և իրական ազգային պետության կերտման միջոցով կկարողանանք հասնել մեր նպատակին՝ պաշտպանելով մեր ազգային արժեքներն ու շահերը: Մեր շարժման առաքելությունն է բացել նոր, փառահեղ դարաշրջան մեր ազգի պատմության մեջ. դարաշրջան, որը մենք մեր անսասան հավատով ու անկոտրում կամքով կգրենք ոսկե տառերով:

«Հոսանք»-ը գտնվում է այս փտած, նեոբոլշևիկյան քաղաքական համակարգից դուրս և ամբողջությամբ դեմ է դրան, քանի որ միայն նման քաղաքական շարժումն է ընդունակ Հայաստանում արմատախիլ անելու մեր պետականությունը կործանման տանող հակազգային երևույթները և վերականգնելու մեր Հայրենիքի փառքն ու պատիվը:

«Հոսանք»-ը հայաստանակենտրոն ուժ է, որը հիմնված է բացառապես ազգային գաղափարախոսության վրա և որևէ աջակցություն չի ստանում աղանդների, գործակալական ցանցերի կամ օլիգարխների կողմից: Շարժումն իր համեստ ու սակավաթիվ ռեսուրսներով նպատակ ունի դառնալու լուրջ քաղաքական գործոն և, այս

քառսային վիճակում կարգ ու կանոն հաստատելով, համախմբման հզոր հոսանք ստեղծել դարերով պառակտված մեր ազգի համար: Միայն այսպիսով կարող ենք հայ ազգայնականներին, հատկապես՝ երիտասարդությանը, բերել նույն գաղափարական հարթակ՝ համախմբելով հավերժության դրոշի ներքո, որպեսզի մեկ մարմնի պես, միասին, ուս ուսի տված՝ առաջ գնանք և իրականացնենք մեր երազանքը:

«Հոսանք»-ը Նժդեհի ոգու օրհնությամբ ձգտում է ցեղակրոն գաղափարախոսությունը վերածել հզոր, ժամանակակից շարժման և հասնել իշխանության, որպեսզի այս պարտված ու ստորացված վիճակից անցում կատարվի դեպի ազգային պետություն, և մեր պատմության մեջ բացվի Ցեղակրոն Հայաստանի էջը: Միայն այդ էջը բացելով է հնարավոր ունենալ ծաղկող տնտեսություն, բարգավաճ հասարակություն և հզոր բանակ, որը կկարողանա իր կամքը թելադրել ոսոխին ու սեփական խոսքն ասել աշխարհաքաղաքական բեմում: Մենք վստահ ենք մեր հաղթանակին, որովհետև այս աշխարհում չկա ավելի հզոր ուժ, քան այն գաղափարը, որի ժամանակը հասունացել է:

«Հոսանք»-ի Առաջնորդի մասին

Հայկ Նազարյանը ծնվել է 1989 թվականի մայիսի 12-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում: Ընտանիքի չորս երեխաներից ամենափոքրն է: 2015 թվականին Կալիֆոռնիայի պետական համալսարանում ստացել է ֆիզիկայի մագիստրոսի կոչում և երեք տարի դասավանդել այնտեղ: Հոգու խորքում միշտ զգալով, որ ժամանակակից Բաբելոնի վերածված Ամերիկան իր երկիրը չէ, և ոգևորված Ապրիլյան քառօրյա պատերազմով՝ 2016 թվականի նոյեմբերին նա որոշում է միակողմ տոմսով մեկնել Հայաստան՝ մշտական բնակության: Ռազմական փորձ ձեռք բերելու նպատակով պայմանագրային հիմունքներով ծառայում է Տավուշի սահմանագծում: Որպես կամավոր՝ նա սկզբից մինչև վերջ մասնակցում է 44-օրյա դավադիր պատերազմին՝ Մարտակերտի շրջանում:

Նազարյանը 20 տարուց ավելի՝ իր ողջ գիտակից կյանքում, եղել է ազգային գաղափարախոսության կրող և սեփական քայլերով, այլ ոչ թե լոկ խոսքերով, ապացուցել իր հայրենասիրությունն ու ազգայնական լինելը: Ազգային պայքարին ու ճշմարտությանը հավատարիմ մնալով՝ նա երբեք չի անդամագրվել որևէ քաղաքական կուսակցության, չի փոխել քաղաքական ճամբարներ, չի զիջել իր սկզբունքները և ոչ մեկին չի քծնել՝ քաղաքականության մեջ առաջ գնալու համար:

Արտաքին թշնամիների ու Հայաստանում գործող դավաճանների հանդեպ տածած զայրույթից և անիմաստ ու անբովանդակ քաղաքական թոհուբոհից հիասթափված՝ ռազմաճակատից վերադառնալուց գրեթե մեկ տարի անց՝ 2021 թվականին, նա որոշում է որպես անհայտ հայրենադարձ ու հասարակ շարքային զինվոր հիմնադրել «Հոսանք»-ը: Այն Հայաստանի միակ ցեղակրոն քաղաքական շարժումն է, որը նորից կյանքի է կոչում ցեղակրոնության գաղափարները և 21-րդ դարում բերում քաղաքական դաշտ, որպեսզի ի կատար ածվի Նժդեհի երազանքը:

Նա իրեն համարում է հայ ազգի քաղաքական զինվոր, որի կյանքի նպատակն է Հայաստանում ազգային հեղափոխության միջոցով առաջացնել իրական ազգային զարթոնք ու վերածնունդ:

Ինչո՞ւ և ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

Ինչո՞ւ միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

Եթե ծանոթ եք մեր գաղափարներին և որոշ ժամանակ է, ինչ հետևում եք շարժմանը կամ նույնիսկ նոր եք իմանում շարժման մասին, գուցե մտածում եք, թե ինչու պետք է միանաք կամ աջակցեք «Հոսանք»-ին՝ լինելով հայրենասեր հայ, ով մտահոգված է մեր ազգի, հայրենիքի ու պետականության մասին: Ծանոթանալով և ուսումնասիրելով մեր նյութերը, վստահ եմ կհամոզվեք, որ «Հոսանք»-ը ոչ միայն լիովին հայամետ ու հայաստանակենտրոն քաղաքական կազմակերպություն է, որն ունի լուրջ ու հեռատես նպատակ, և, որը չի ֆինանսավորվում կամ աջակցվում որևէ գործակալական ցանցի, օլիգարխի կամ աղանդի կողմից, այլև միակ ցեղակրոն քաղաքական շարժումն է, որն արդեն իսկ քսանմեկերորդ դարում Նժդեհի գաղափարները կյանքի է կոչում և բերում մեր քաղաքական դաշտ:

Հետևաբար, եթե որևէ հայ, ով իրեն գիտակից ու պատասխանատու մարդ է համարում, պետք է աջակցի նման մի քաղաքական շարժման, քանի որ մեր բոլոր խնդիրները ունեն նախ և առաջ քաղաքական բնույթ: Որքան էլ փորձենք առանձին մշակույթի կամ կրթական ոլորտը բարելավել մեր կամավոր մասնակցությամբ կամ ֆինանսական աջակցությամբ, այդ ամենը շատ քիչ օգուտ կարող է տալ, եթե չլուծվի մեր հայրենիքի բուն խնդիրը, որը հենց քաղաքական է: Մինչև մենք չունենանք իսկապես ազգային ու հայկական քաղաքական ուժ, որն իսկապես կարող է ներկայացնել հայ ազգի շահերը, մեր հասարակությանը տարբեր ձևերով ազգայնացնելու բոլոր փորձերը ապարդյուն կանցնեն:

Այդ իսկ պատճառով մենք դիմում ենք բոլոր՝ պարտականություններ ճանաչող ու անձնական պատասխանատվություն կրող ազգայնական հայերին՝ թե՛ Հայաստանում, և թե՛ Սփյուռքում ապրող, ովքեր սրտանց, իրապես ուզում են տեսնել ազգային, հայկական պետություն, որ մեզ աջակցեն ինչով, որ կարող են:

Ձեր նվիրումն ու ներդրումները բազմիցս ապացուցել են, որ հայի հոգին կապ չունի միայն աշխարհագրության հետ. այն ուժ է, որ բաբախում է, որտեղ էլ որ լինենք: Այսօր մեր հայրենիքը կանգնած է նոր ու օրհասական մարտահրավերների առաջ, և մեր սերունդն ունի պատմական հնարավորություն ոչ միայն վերափոխելու, այլև՝ իրապես հեղափոխելու Հայաստանը, վերակառուցելու ազգային արժանապատվության, ինքնիշխանության և հզոր պետականության հիմքերը: Դրա համար մենք միայն գաղափարական պայքարի մեջ չենք. մենք գործի մարդ ենք, ովքեր կամաց-կամաց իրականացնում են համակարգային փոփոխություններ:

«Հոսանք»-ը ձգտում է հզոր, ինքնիշխան, ազգային շահերով առաջնորդվող Հայաստանի: Մենք աշխատում ենք ոչ թե որպես ընդամենը քաղաքական գործիչներ, այլ որպես ազգային պայքարի մասնակիցներ, ավելի ճիշտ՝ քաղաքական մարտիկներ, որոնց նպատակը ոչ թե կարճաժամկետ հաղթանակներն են, այլ երկարաժամկետ հաղթանակը՝ Հայաստանի վերածնունդը: Սակայն, մեր պայքարը առաջ տանելու համար հարկավոր են ռեսուրսներ, ֆինանսական կայունություն և հայերի լավագույն հատվածի համախմբվածություն:

Ձեր ներդրումը կարող է փոխել խաղի կանոնները: Հայաստանի ապագան կախված է ոչ միայն մեր վճռականությունից, այլև՝ ձեր աջակցության արդյունավետությունից: Մենք

չենք խնդրում բարեգործություն՝ մենք առաջարկում ենք համագործակցություն, որտեղ դուք կտեսնեք ձեր մասնակցության իրական արդյունքը:

Վստահ ենք, որ «Հոսանք»-ը միակ քաղաքական ուժը կարող է լինել աշխարհում, որը կարող է կամուրջ ստեղծել Հայաստանի և Սփյուռքի միջև, քանի որ մեր շարժման գաղափարական հիմքում տարանջատում չկա սփյուռքահայերի ու հայաստանցիների միջև՝ գիտակցելով, որ բոլոր հայերը, անկախ նրանից, թե աշխարհի որ անկյունում ապրեն, ունեն նույն պարտականությունը մեր հայրենիքի նկատմամբ:

Մեր ժողովրդի մեծամասնությունը մեր մասին դեռ չգիտի ու չի էլ լսել, որովհետև ներկայիս հակահայկական համակարգի կողմից առայժմ համարվում ենք այսպես ասած «մարգինալ» քաղաքական կազմակերպություն, որն իբրև «ապագա չունի», սակայն ազգային մտածելակերպ ունեցող հայ երիտասարդների զգալի մասը՝ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում մեզ ավելի լավ է ճանաչում ու ավելի շատ է համակրում, քան ներկայիս մեծ քաղաքական ուժերին, և սա շատ խոսուն է մեր շարժման ներուժի մասին:

Մենք ձգտում ենք լիովին նոր ազգային քաղաքական էլիտա ստեղծել, որը հիմնված է բացառապես հայրենասիրության և ազգային շահերի վրա, այլ ոչ թե՝ օտար ազդեցությունների կամ նեղ անձնական շահերի: Այդ էլիտան էլ կամաց-կամաց ձևավորվում է նոր սերնդի ազգային երիտասարդներից, որոնց համար անկախ պետականությունը ոչ միայն գերագույն արժեք է, այլև՝ սրբություն:

Մենք տեսնում ենք, որ մեր շարժումը շատ ուշադրություն է գրավում ու համակրանք է ստանում նոր երիտասարդ սերնդի կողմից, ի տարբերություն մյուս քաղաքական շարժումների, որոնք այդ հարցում պարզապես ձախողում են: Սա մեզ համար ցուցիչ է և շատ լավ նշան, որ մենք ոչ միայն ճիշտ ուղին ենք բռնել, այլև այն, որ մեր շարժումը շատ մեծ ապագա ունի:

Շատերը այս պահին կարծում են՝ իմաստ չկա ֆինանսավորել մեզ նման փոքրաթիվ ու, այսպես ասած, «մարգինալ» քաղաքական շարժմանը, քանի որ մենք իբրև ոչ մի հնարավորություն չունենք մեր երկրում գործող մեծ քաղաքական ուժերին այս պայքարում հաղթելու և հասնելու իշխանության: Սա իրականում կարճատեսություն է, քանի որ պատմությունը մեզ բազմիցս ցույց է տվել, որ օրհասական ու քառսային ժամանակներում ճակատագիրը մեզ նման շարժումներին է կանչում գործողություններ անելու համար: Եվ կարծում ենք՝ բոլոր ողջամիտ ու իրատես հայերը քաջ գիտակցում են, որ մեր երկրին սպասվում են նման քառսային ժամանակներ, և մենք պարտավոր ենք պատրաստ լինել այդ փոթորիկին: Նման ծայրահեղ ժամանակներում ազգը փնտրում է այն շարժումներին ու առաջնորդներին, ովքեր կհամարձակվեն արմատական փոփոխություններ իրականացնել: Նման ժամանակներում, մեզ նման «մարգինալ» շարժումները երկրաչափորեն աճում են:

Մեր քաղաքական հակառակորդների քանակական առավելությունը ու նրանց աստղաբաշխական ռեսուրսները մեզ չեն վախեցնում, քանի որ մենք վստահ ենք, որ նրանք հիմնված են ստերի ու կեղծիքների վրա, և կտապալվեն թղթե տնակի պես մի փոքր արտաշնչից: Իսկ այն, ինչ մենք ենք կառուցում, թեպետ փոքր այս պահին, կունենա ամուր հիմքեր, որը կշարունակվի դարեդար, նույնիսկ մեր ոսկորների փոշիանալուց հետո:

Հետևաբար, «Հոսանք»-ին միանալը կամ աջակցելը հարկավոր է յուրաքանչյուր գիտակից հայ ազգայնականի համար, քանի որ դա անելով դու հավաստիացնում ես, որ Հայաստանը ոչ միայն ներկայում, այլև ապագայում կունենա իրապես հայկական քաղաքական կառույց, որով կկերտվի մեր երազած ազգային պետությունը: Հայությունը պետք է կառավարի իր ճակատագիրը, ոչ թե ենթարկվի արտաքին խաղացողներին, և դուք

շարժման համար ձեր փոքր լուման ներդնելով՝ կարող եք չափազանց օգնել այս հարցում: Կարող եք վստահ լինել, որ ձեր ներդրումը, որքան էլ մեծ կամ փոքր լինի, չի գնալու անհայտ ուղղությամբ, այլ կծառայի մեր համազգային նպատակի իրագործմանը:

Ինչպե՞ս միանալ կամ աջակցել «Հոսանք»-ին

«Հոսանք»-ին միանալու համար կարող եք այցելել «Հոսանք»-ի կայքէջը և լրացնել այնտեղ տեղադրված հարցաթերթիկը, որից հետո կհամարվեք անդամ, եթե համաձայն եք «Հոսանք»-ի անդամագրության համաձայնագրի հետ և համապատասխանում եք շարժման որակավորումներին, որոնք ևս տեղադրված են կայքէջում: Մեր առաջնային նպատակներից է կառուցել հավատարիմ, նվիրյալ և գաղափարական կորիզ շարժման համար, որի մաս Դուք կարող եք լինել: Այդպիսով՝ մենք կամաց-կամաց կընդարձակենք մեր շարքերը և աստիճանաբար կդառնանք մեծ քաղաքական ուժ, ու բոլորը մեզ հաշվի կառնեն:

Եթե դեռ պատրաստ չեք միանալու ու ուզում եք ուղղակի ինչ-որ կերպ աջակցել ու օգուտ տալ «Հոսանք»-ին, կարող եք մեզ հետ կապ հաստատել և Դու՛ք ասել, թե ինչ հմտություններով կարող եք ձեր աջակցությունը ցուցաբերել մեր շարժմանը: Մեզ միշտ հարկավոր են լրագրողներ, իրավաբաններ, գրողներ, գրաֆիկ դիզայներներ, թվային նկարիչներ, տեսանյութ մոնտաժողներ, կինոօպերատորներ, հաշվապահներ, մարզիչներ և առհասարակ ակտիվ ու հմտություններ ունեցող մասնագետներ, հատկապես՝ երիտասարդներ: Եթե չունեք նման հմտություններ, կարող եք օգտակար լինել՝ ուղղակի մեր տեսանյութերը ու գրառումները տարածելով և ձեր բոլոր ծանոթներին մեր մասին պատմելով: Իսկ, եթե ինչ-որ պատճառով չեք ուզում բացահայտ աջակցություն ցուցաբերել, կարող եք ֆինանսապես աջակցել՝ մեծ կամ փոքր գումարով, և վստահ կարող եք լինել, որ ամեն դրամը կգնա շարժման զարգացման նպատակին:

Մեզ պետք է ֆինանսական աջակցություն, որպեսզի կարողանանք վարձատրել հայրենասեր մասնագետներին և շարժման հետ կապված բոլոր կարևոր ծախսերը փակել: Կազմակերպված շարժման համար մենք պիտի կարողանանք ունակ մարդկանց գործի դնել, ովքեր կարող են մեր շարժման ընդարձակման հարցով զբաղվել՝ որպես հիմնական աշխատանք: Դուք կարող եք տեղեկանալ, թե ինչպես ֆիանսապես աջակցել մեզ՝ այցելելով մեր կայքը և ուսումնասիրելով նվիրատվության էջը: Պատմության մեջ ոչ մի քաղաքական շարժում առաջ չի գնացել առանց ֆինանսավորման, և այս ժամանակակից դարում էլ ոչինչ չի փոխվել այդ հարցում: Որքան էլ փոքր լինի ձեր ներդրումը այս շարժման մեջ, դա մեծ տարբերություն կտա վերջում, երբ շատերը սկսեն միանալ: Այդ իսկ պատճառով մենք անչափ շնորհակալ ենք ցուցաբերած ամեն տեսակ աջակցության համար:

Մեր թշնամիները ուրախանում են, երբ տեսնում են պառակտված հայ ժողովուրդ՝ միաժամանակ ամենից շատ վախենալով համախմբված հայ ազգից: Առանձին-առանձին մենք ընդամենը ողորմելի էլեկտրոններ ենք, իսկ միասին՝ հոսանք: Մեր պայքարի հաջողությունը իսկապես կլինի կամքի հաղթանակի մեծագույն վկայությունը: «Հոսանք»-ը ճակատագիր ունի, և մեզ ոչինչ չի կարող կանգնեցնել: Սա ոչ թե մեկ շարժման, այլ ամբողջ հայ ազգի պայքարն է:

Աջակցեք կամ միացե՛ք «Հոսանք»-ին, դարձե՛ք հայության նոր վերածննդի հիմնասյունը:

ՀՈՍԱՆՔ

ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԵԿ ԿԱՄՔ

hosank.net